17
В-42

100

XVI/2 12
100
96-Pt.
100
96-Pt.

# ԹԷՈՓՐԱՍՏՈՍԻ

## ՆԿԱՐԱԳԻՐՔ

2004

17 2073 1672-ԱԿ

# ԹԷՈՓՐԱՍՏՈՍԻ

## ՆԿԱՐԱԳԻՐՔ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Հ. ԱՐՍԷՆ ԿՈՄԻՏԱՍ
ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
'Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ՀԱՅԿ. ՍՍՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А ... Библиотека
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

'Ի ՎԵՆԵՏԻԿ
'Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ
1830

1[Թեոփիլեանոս]

# ԱԶԴ

Թէոփրաստոս՝ յԵրէս քա-
ղաքէ Լեսբոս կղզւոյ, աշակերտ
էր Պղատոնի և Արիստոտելի,
և վարժապետ Մենանդրի: Բա-
զում գիրս բնախօսեաց զարա-
րածոց, այլ սակաւք կան առ
մեզ: 'Ի խրատականն Նկա-
րագիրքս մի է յընտիր գրոց
նախնեաց, որ հակառակն՝
ախտից նկարուք՝ յորդորէ ըզ-
մարդիկ 'ի լաւութիւն, և յա-

մենայն ժամանակի և առ ամե-
նայն ազգս օգտակար գտանի.
վասն որոյ և ոսկեղէնիկ անուն
ժառանգեաց:

Հելլէն բնագիրն բազում ու-
րեք յաղաւաղելոյ գրչաց մռայլ
ունի. է ուրեք ուր զնոյն բանս
նովին բառիւք կրկնագրէ, է զի
թերի զիմաստն թողու, և այլ
երբեմն նկարագիր ընդ նկարա-
գրի թուի խառնեալ: Մեք
թարգմանեցաք որպէս և գը-
տաք զսա ձուլագրոշմ տպա-
րեալ 'ի Լիպսիա, 'ի կարի կա-
րեւորան և եթ ծանօթս ինչ կար-
ճառօտս տուեալ ընթերցողաց:

Կամէաք համառօտել և ըզ-
վարս իմաստասիրս, եթէ

ստուգապատում գրեցեալքն Թուելին. այլ ստոյգ վարք գրաւորական արանց՝ մատեանքն նոցա են ։ Անմոռաց յիշատակաց արժանի 'ի սորա վարս այն է, զի եթէ իմաստասէր՝ որ ստէպըն քարոզէր, Թէ Չիք կորուստ չար քան զժամանակն, նոյն ինքն անցեալ զհարիւրամենիւք և 'ի վախճանել եկեալ՝ ասաց. Զղջ է ինձ մեռանել՝ դեռ այն ինչ սկսեալ լինել իմաստուն ։

# ԹԷՈՓՐԱՍՏՈՍԻ

## ՆԿԱՐԱԳԻՐՔ ԲԱՐՈՒՑ

---

Թէոփրաստոս առ Պօղիկղէս ։

ԲԱԶՈՒՄ անգամ մածեալ զմտաւ յառաջագոյն զարմա֊ցեալ եմ և թերևս ոչ դադարե֊ցայց 'ի զարմանալոյ, թէ քանզի նոյն մի օդք են աշխարհիս Ելլա֊դայ և ամենայն հելլէնք նովին օրինօք են դաստիարակեալ, զի՞ է զի ոչ ամենեքեան զնոյն կարգս վարուց բերեմք յանձին ։

Եւ զի 'ի վաղ ժամանակաց

*հայեցայ ես 'ի մարդկան բնու-
թիւն՝ կեցեալ ամս խնուն և
ինն և ընդ բազումազգի ազգի
բարս եղեալ կենցաղակից, և հա-
ւաստեաւ մանր զննեցի զբարիս
'ի մարդկանէ և զչարսն, արժան
համարեցայ՝ ով Պոլիկղէս՝ զիւ-
րաքանչիւր նոցա զկարգս կե-
նաց ընդ գրով արկանել: Արդ
եդից քեզ առաջի ըստ ազգի
զամենայն բարս սոցա * և զոճ
վարուց :*

*Այն ունիմ, ով Պոլիկղէս,
թէ որդեակք մեր 'ի լաւու-
թիւն կրթիցին՝ առ ձեռն ու-
նելով զխրատակս այսոցիկ ,*

* Իմա զմարդն միայն, զոր 'ի
սեռին փիլոսոփն սիմաբանեաց, և
ոչ եթէ զերկնաւորն զմարդկային
և զմարդոյ, որպէս Թովմաս եր-
բեմն, և կարծիք եղեն Թերի ըն-
ներոյ կրոնոյ, զի ոչ բերէ և զա-
տափինեայն նկարագիրս :

յորոց իբրև յօրինակաց այլընտիր լինիցին՝ ընդ պարկեշտագոյնս վարել կենցաղ, զի մի՛ քան զնոսա ինչ յեանեալ դատանիցին։

Եւ արդ ես բան 'ի գործ արարից․ իսկ զհետ գալ և տեսանել՝ եթէ արդար խօսիցիմ, այն քո է։ Եւ թողեալ զերկայն նախաշաւիղ խօսից իրացս՝ բանիս սկիզբն առից յայնցանէ որ 'ի խորամանգութիւն հատեալքըն իցեն։ Եւ անտի սկսեալ՝ նախ եդից զսահման նորա․ ապա որպէս ինչ ոք խորամանգն իցէ՝ զայն կարգեցից, և զինչ բարք նորա։ Այնպէս և զայլ ամենայն ախտս, որպէս յանձին կալայ, ջանացայց կարգաւ մի ըստ միոջէ յանդիման առնել։

# Ա.

## ՎԱՍՆ ԽՈՐԱՄԱՆԳՈՒ-
## ԹԵԱՆ

—

ՆԵՆԳ խորամանգութիւն
ըստ իւրում նկարագրին թուի
լինել կեղծիք բանից և գործոց
առ 'ի չարն : Եւ խորամանգ-
այն ոք է, որոյ առ թշնամիսն
մատուցեալ՝ խօսել կամի ընդ-
նոսա, որպէս այն թէ ոչ ինչ
ամենևին ունիցի խէթ ընդ-
նոսա . և յերեսս գովէ զնո-
սա, որոց 'ի թիկանց դարան
գործէր. ընդ միասնոցա տըրտ-

մի ընդ նոսա, և չարախօսացն իւրոց Թողութիւն շնորհէ։ Յաղագս անձին բամբասանաց և առ զրկեալս և առ զչարեալս հեղութեամբ խօսի։

Եւ որ սախալաւ տեսանել ըղձնա և խօսել ինչ կամիցին, պատուիրէ դառնալ անդրէն յայլում ժամու. և պատճառի՝ թէ այն ինչ եկեալ է, և թէ օրն տարաժամեալ է և ինքն տկար։

Եւ որ փոխ 'ի նմանէն խնդրիցեն և հանգանակ ժողովելցեն, Տուրեւառ վաճառոց ոչ է, ասէ. և յորժամ ոչ ինչ վաճառիցէ, Ղահավաճառ՝ ասէ՝ բարուոք ընթանայ։ Թէ լսէ ինչ, չլսելոյն առնէ, և թէ տեսանէ՝ չհայելոյն։ Ոչ երբէք ասէ յայտ զոր գործէն, այլ թէ Խորհուրդ 'ի մտի ունիմ. և թէ խոստավան ինչ ուրեք լինիցի, Մոռացեալ եմ, ասէ։ Ի ինչ զոր՝

Տեսից, ասէ, է զոր՝ Չգիտեմ, և է ընդ որ Զարմանամ, և է ուրեք՝ զի Նու ես ինքն զդոյն խորհիմ, ասէ ։

Մխով բանիւ, Ճարտար է միշտ յայս ձևս խօսից․ Ի՛հ ոչ հաւատամ, ոչ կարծեմ, զարմանք է․ և յաւելու թէ Այլ յայլմէ եղեալ եմ․ և թէ Այդ ոչ պատմեցաւ ինձ, նոր և չըքնաղ իրք են առ իս․ Երթ այլում ումեք ասա․ քե՞զ արդեւք անհաւատացից՝ եթէ նմա եգից մեղ, ոչ գիտեմ, տարակոյս է ինձ ։

Այլ զդո՛յշ լեր, մի՛ վաղվաղակի հաւատացես այսպիսի ձայնից և պատ 'ի պատ բանից և շատխօսութեանց, քան զոր չիք ինչ գտանել չար ։ 'Ի կեղծաւոր և 'ի նենգաժետ բարուց առաւել պարտ է զգուշանալ՝ քան յիժից ։

## Բ.

## ՎԱՍՆ ՍՈՒՏԱԿԱՍՊԱ-ՍՈՒԹԵԱՆ

*Սուտակասպասութիւն համարելի է վարք անպատեհ 'ի շահ սուտակասպասին, և սուտակասպաս այն՝ որ ճանապարհակից ումեք եղեալ, ասիցէ. Առնուս 'ի միտ՝ թէ որպէս 'ի քեզ ակնկառոյց կան մարդիկ. ոչ ումեք յորոց 'ի քաղաքիս են լինի այս՝ բաց 'ի քէն. երէկ գովեցար 'ի սրահին Ստոյիկեան.* զի իբրև աւելի քան զերեսուն ակմբեալ էին, և զրոյցք 'ի մէջ անկան՝ թէ ո՞ լաւագոյն իցէ, աստի սկսեալ ամենեքեան 'ի վեր և 'ի վայր*

*Այս տեղի հասարակաց էր յառաջն, և ապա կարգեցաւ ժողովարան Ստոյիկեան իմաստասիրաց։

զքո անուն յեղյեղեցին ։ Եւ ոչ ինչ այսպիսի ասելով, տունու զգուշութեամբ 'ի հանդերձէ նորա զծխուն փոքրիկ ։ Եւ եթէ ունդ ինչ յարդի արկեալ իցէ հողմոյ 'ի վերայ գըլխոյն, ծայրիւք մատանցն խնամով 'ի բաց քաղէ, ժմտի և ասէ. Տեսանե՞ս, երկու օր է զի չեմ տեսեալ զքեզ, և ահա մօրուքդ ալեւորեալ է. սակայն և այնպէս առ տխովք հասակիդ տակաւին ոչ ինչ ընդհատ յայլոց քաջաթուխ են հերքդ ։

Եւ 'ի խօսել նորա՝ սաստէ այլոց լուռ լինել, և նմա լու 'ի լու գովէ զնա. և իբրև դադարեցէ՝ ծափ զծափս հարկանէ, ձայն առնու՝ վկայէ թէ ամենաբարուոք խօսեցաւ ։ 'Ի կատակել նորա՝ ցուրտ ծաղր արձակէ, և զձորձսն ընդ բերանն ածնդէ, որպէս թէ ոչ կարացեալ ունել զծաղրն ։

Որ յուղուոջ ընդ առաջ պատահիցեն, պատուէր տայ զտեղի ունել մինչև նա անցանիցէ . և գնեալ տանն և խնձոր՝ բերէ տայ որդւոց նորա ակնյանդիման նորին, և ողջագուրեալ ասէ, Բարւոյ հօր սիրուն ձագունք : Եւ յորժամ նա հողաթափս գնիցէ, զոտնն բարեձև քան զօդն լինել ասէ : Եւ թէ առ բարեկամ ոք ուրեք գնայցէ, յառաջեալ պատգամաւոր ընթանայ, թէ Առ քեզ գայ . և անդրէն ընդ առաջ նորա դարձ արարեալ պատմէ, թէ Ազդ արարի : Առանց ընդ բանս ինչ ածելոյ կարօղ է պաշտել անդանգաղ և զոր 'ի կանանցն շուկայի :*

'Ի սեղանակիցն լինել, յա-

Հ.Ս.Խ.Հ. ... ССР А Публичная библиотека ... 1922 ... ՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

* Կանանց շուկայ կոչէր յԱրևելս ուր վաճառէին անօթս երկաթի . սամի կարծեն թէ դարբնեայ [illegible] օւ-

առաջ քան զամենայն ոք ինքն 'ի գովութիւն առնու զգինին. և թէ մերձ բազմեալ իցէ, Ո՛հ, ասէ, որպէս յուշիկ ուտես. և առեալ ինչ նմա 'ի սեղանոյն, Աղէ զայս տես, ասէ, քանի՜ համեղ է: Եւ հարցանէ թէ մսիցի՞, և խնդրիցէ՞ այլ ևս ար- կանելիս. և զայս տացեալ ծածկէ զնա վերարկուաւ. և կարկառեալ յունկն նորա շշըն- ջէ. և 'ի խօսելն ընդ այլ 'ի նա ինքն կառուցեալ պիշ ունի զակն:

Եւ 'ի թատերն յափշտա- կեալ 'ի մանկանէն զբարձըկ- նեարն ինքնին արկանէ նմա: Զտանէ նորա ասէ թէ գե- ղեցկաշէն է, և զագարակէն թէ քաջատունկ, և զկենդա- նագրէն թէ ճշգրտահան: Եւ

Նշխան 'ի պէտս որոմլայնի Տապու- ցանէլ աոխտէ Թէոփրաստ:

գլուխ ամենայնի, զամենայն ինչ ասել և առնել Թուի սուտակապապան, որովք կարծէն հաճոյ լինել:

Գ.

## ՎԱՍՆ ՄԱՐԴԱՀԱՃՈՒԹԵԱՆ

Մարդահաճութիւն, զի սահմանաւ ճշգրտեսցուք, է կենցաղ անվայելուչ՝ 'ի պատճառս հեշտութեան: Եւ անշուշտ մարդահաճոյն է, որ 'ի հեռուստ ոք ձայն արկեալ բարբառիցի և այր զօրութեան կարդայցէ, և յոյժ զարմանայցէ, և երկոքումբք ձեռօք պինդ ունիցի. և սակաւիկ մի ուղեկցեալ՝ հարցանիցէ, թէ ե՞րբ միւսանգամ տեսանիցէ զնա. և այլ ևս գովութիւնս տացեալ՝ այնպէս ուրեմն 'ի բաց գնայցէ:

Նա ինքն եթէ յիրաւարարութիւն կոչեսցի, ոչ միայն յորոյ կողմանէն կայ՝ նմա ևեթ հաճոյ լինել խնդրէ, այլ և ոսոխին. զի հասարակաց նոցա ի-

բաւարար լինել Թուլցի . * Եւ զեկացն ասէ թէ ուղիղ ես քան զքաղաքացիսն իրաւաբանեն :

Եւ թէ 'ի ճաշ ուրեք հրաւիրեսցի , աղաչէ զկոչնատէրն ձայնել զմանկունս իւր . և 'ի մտանել նոցա առ նա , Վա՜շ ասէ , քան թուզ թզոյ՝ առաւել նման են սոքա հօր իւրեանց . և առ ինքն ձգեալ համբուրէ , և նստուցեալ առ իւր՝ խաղայ ընդ նոսա ասելով Տիկ , Տապարիկ . և թոյլ տայ նոցա ննջել 'ի գոգ իւր , թէպէտ և նեղիցի : Եւ զտղայն առեալ 'ի դայեկէն , ինքն ծամէ և ջամբէ ինչ նմա , և 'ի սուլիչս մանկականս փաղաքշի , և ճարպիկ ու ճարտար քան զհաւն կոչէ : . . . . . . .

* [illegible]

## Դ.

## ՎԱՍՆ ՄԵԾԱՐԳՈՒԹԵԱՆ *

. . . Բազում անգամ սափրէ զհերսն, և զատամունսն ունի սպիտակս, և զհանդերձսն մինչ չև հնացեալ սակայն փոփոխէ, և իւղովք անուշիւք օծանի ։ 'Ի հրապարակսն առ սեղանաւորսն դեգերի, և 'ի վարժարանսն յայն տեղիս յաճախէ՝ ուր պատանեակքն մարզին, և 'ի թատրոն յորժամ տեսարանք իցեն՝ երթայ մերձ առ մեծամեծ զօրավարսն բազմի ։

Վասն իւր գնէ և ոչ ինչ, այլ զի առաքեսցէ հիւրոցն 'ի Բիւզանդիոն. շունս լակոնացիս 'ի Կիւզիկոն, և մեղր հիւ-

* Այսու զայս նկարագիր անձեր-նագիր խառնեն ընդ երրորդին ։

միտեան 'ի Հռոդոս. և պատմէ ապա որոց 'ի քաղաքին են, թէ զայս ինչ և զայս արարի:

Բայց գիտէ եւս մնացանել 'ի տան կայլիկ և ստանալ մարգավայրի և սիկեղիացի ալանիս և վէգս այծեմանց և բոլորշի սրուակս թիւրիացիս և գաւաղանս 'ի Լակեդեմոնէ գալարունս և գորգս անկուածոյս նկարակերտս արամբք պարսկաստանեօք, և վայրագաւիթ 'ի բռնամարտկաց և գնդակախաղուց ասպարէզ. և շուրջ յածեալ ցոյցս առնէ համապատ անդր 'ի ներքս հրաւիրեալ իմաստասէրս, իմաստակս, զննախաղացս և երաժիշտս արուեստականաց: Եւ հուսկ ապա ինքն 'ի հանդիսի անդ ասէ ցմեւսն յաղագս հանդիսատեսացն, թէ Նոցա է տուեալ զխաղեալն:

## Ե.

## ՎԱՍՆ ՄՆԱՓԱՌՈՒԹԵԱՆ

*Մնափառութիւն թուի լինել անարժան տենչումն պատուոյ։ Եւ մնափառ այնպիսի ոք է, որ թէ յընթրիս կոչեսցի՝ ջանայ երթալ առ կոչնատեառնն բազմել ՚ի սեղան։ Զորդի իւր ՚ի Դելփիս առեալ տանի՝ անդ փոքրել զհերսն.* և հոգայ՝ զի լինիցի իւր սպասաւոր եթովպացի։ Եւ իբրև արծաթոյ մնաս մի ումեք հատուցանելոց իցէ, ջանայ նորս և փայլուն տալ։*

* ՚Ի հնումն այս սովորութիւն էր ամենայն աթենացւոց՝ յորժամ մանկունքն յարբունս հասանէին. Բայց յետոյ մեծատունք և պարծողք միայն առնէին առ սնոտի փառասիրութեան։

Եւ Ճայլին զոր առ տնկին բուծանէ՝ ոչ մոռանայ գնել սանդղին, և առնել վահանակ սըրղընձի, զոր առեալ Ճայլին ուտոսակցէ 'ի սանդուղսն: Եւ եթէ զարջառ մատուցանիցէ զոհ, զմորթ խալամոյն եղջերուվին հանդէպ մոլից տանն կախէ զձողոյ՝ մեծամեծ պսակօք շուրջ պսակեալ, զի որ մտանենն տեսցեն ամենեքեան՝ թէ զարջառ զենեալ է: Եւ յետ ընդ ասպետսն 'ի հանդէս հեծանելոյ՝ զայլն ամենայն տայ ցծառայսն տանել 'ի տուն, և ինքն արկեալ զամիլանն՝ մըտրակաւ յոտս Ճեմ առեալ զգնայ 'ի հրապարակին:

Եւ իբրև սկնդուկն իւր մեռանիցի, գերեզման շինէ նմա և մահարձան կանգնեալ գրէ 'ի վերայ՝ Ղատաւուխ Մելխանոյ: Եւ կախեալ յուխտ մանեակ պղնձի 'ի մեհենին Ասկ-

դեպետյ՝ պատկօք մաշէ զայն և օծանէ զօր ամենայն ։

Ջանայ հնարիւ և առ պետական աւագորերոյն՝ զի խորհրդոյ զոհիցն իւքն լիցի ազգաբար առ ժողովուրդն . և զգեցեալ պայծառ պատմուճան՝ պսակ 'ի գլուխ եղանէ առ նոսա և ասէ . Ա՛րք աթենացիք , զոհեցաք իշխանքս դիցամօրն . պատարագք մեր ընդունելի են և բարենշան . և դուք ընկալարո՛ւք զբարիս ։ Յետ ազդեցուցանելոյ զպատգամս զայս՝ երթայ 'ի տուն և պատմէ կնոջ իւրում, թէ որպէս առաւել քան զոր կամէր յաջողեցաւ նմա ամենայն ։

## Դ. և Ե.

## ՎԱՍՆ ՍՆԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԱՅԼՈՎ ԿԱՐԳԱՒ

Սնափառութիւն թուի թէ անպատեհ ցանկութիւն է փառաց։ Եւ այնպիսի է սնափառն, որ թէ 'ի կոչունս ուրեք հրաւիրեսցի՝ փութայ մղի առ հացտուն հուպ բազմել յընթրիսն։ Եւ զորդին 'ի Դելփիս տանի հարթել զգէսսն, և փոյթ մեծ ունի՝ զի սպասաւոր եթէովպացի զկնի իւր շրջեսցի. և 'ի տալ ումեք մնաս ինչ արծաթոյ՝ ուշ առնէ զնորին տալ։

Եւ թէ զեզն պատարագ մատուցէ, զճակատ խալամոյն եղջերօքն հանդերձ առաջի դր-րաց տանն ընդ ցից հանեալ վարսէ, շուրջ բոլորեալ զնո-

վաւ ոսակս մեծամեծս, զի որոց մտանենն երևելի կայցէ՝ թէ զեղն է զոհեալ: Եւ իբրև ընդ ասպետան 'ի հանդէս հեծանիցի, ապա այնուհետև ի-ջեալ յերկուարէն՝ զամենայն ինչ զայլ թողու 'ի մանուկն դարձուցանել 'ի տուն, և ըզ-պատմուճան փառացն միայն արկեալ զիւրև՝ մտրակ յոտս 'ի հրապարակին ձեռի:

Իսկ եթէ ակնդուլն մեռանի-ցի, չերխմ կանդնէ նմա և ար-ձան և գիր 'ի վերայ, թէ Աղ-նիւ մելխոխնեցի: Եւ յաղա-գըս ձայլին՝ որ 'ի տանն սնանի-ցի, դնէ սանդղիկ անմուայ, և առնէ աապարիկ պղնձի, զի առեալ զայն ձայլին վազվազիցէ ընդ սանդղամատուննն: Եւ նուիրեալ օղ պղնձի յանկղե-պեան տաձարին, այնչափ ար-կանէ 'ի նա ոսակս, մինչև մա-չեսցի:

Ստէպ ստէպ սափրէ զհերսըն, զատամունսն ունի սպիտակ փայլուն, և զգեստք որ դեռ պատուականքն լինէին՝ 'ի բաց ընկենու, և խուղովք անուշիւք օծանի հանապազօր ։ 'Ի հրապարակս՝ զանզանաւորօքն գայ, 'ի կրթարանսն՝ անդ դեգերի՝ ուր մանկունքն ընդ մարզս ելանեն, և 'ի տեսարանս՝ յորժամ խաղք լինիցին՝ երթայ մօտ առ զօրավարսն նստի ։

Եւ ոչ մի ինչ յիւր պէտսն ոչ ստանայ, այլ առ հեւրսն առաքէ այսր անդր. 'ի Կիւզիկոն շունս լակոնացիս, և մեղր հիմիտացի 'ի Հռոդոս. և ապա քաղաքացւոցն քարոզէ՝ թէ զայս ինչ և զայս գործեցի ։

Գիտէ և մարդաձիւաղ 'ի տան սնուցանել և աղաւնիս սիկեղիացիս, և ստանալ ձանս վթայ վայրի և չիշա բոլորշիս թիւրիացիս և խեղաթիւր մա-

հակս 'ի Լանկեդեմոնէ և սրահակս Նկարէնս անկուածոյս 'ի կերպարանս պարսկաց, և գաւիթ 'ի պէտս ասպարիսի բռնամարտկաց և գնտաձգութեանց. և այսր անդր ցոյցս առնէ տալ զայն 'ի սպաս իմաստասիրաց, զնաշարժից և նուագողաց. և ինքն ապա յետ հանդիսիցն ասէ առ այլ ոք վասն հանդիսականացն, եթէ Դոցա աւագիկ է խաղեալք:

Գուն գործէ և առ հրամատարս ժողովրդեանն, զի զազդեցութիւն զոհից ինքն արտացէ առ ամբոխն. և հանդերձաւորեալ պայծառ պատմուճանաւ՝ պսակազարդ ելանէ առ նոսա և ասէ. Արք աթենացիք, զոհեցաք նահապետաց զոհս մօրն աստուածոց, և հաճոյականք են պատարագքս մեր և բարեգուշակք, և դուք 'ի բարիսն վայելեսջիք: Ապա յետ այսր ա֊

դարարութեան գնայ 'ի տուն պատմել կնոջ իւրում՝ թէ զի՛նչ առաւելութիւն յաջողեցին նմա կամք իւր ։

## Զ.

## ՎԱՍՆ ԱՄԲԱՐՀԱՒԱ-ՃՈՒԹԵԱՆ

*Ամբարհաւաճութիւն անշուշտ թուի լինել ցոյց անգոյ բարեաց : Եւ ամբարհաւաճ այնպիսին է, որոյ կացեալ 'ի կէրճ ծովուն՝ պատմէ եկաց և պանդխտաց, թէ քանի՛ բազում են նորա ինչք 'ի վերայ ծովու . ճառէ և զշահից վաշխի՝ թէ քանի՛օն լիցեն, և թէ ինքն որչափ ինչ շահեցաւ և կորոյս . և զայս այսպէս մեծամեծս կատարեալ, առաքէ անդէն զմանուկն առ լումայափոխն առ որում դրամ մի և եթ կայ նորա :*

*Եւ առ ուղեկցին պատեհ առեալ գիտէ առնել զճանապարհայն, թէ որպէս ընդ Աղէք-*

սանդրի զինուորեցաւ, և զիմ՛րդ-եղև ընդ նմա . և ո՛րչափ ականակուռ բաժակս յաւարի առեալ եբեր ընդ իւր . և զասխացուց Ճարտարացն վիձի՝ թէ քաջ քան զեւրոպեցիսն են ։ Եւ զայս ամենայն համբաւ զրուցէ առանց 'ի տարաշխարհ ուրեք 'ի քաղաքէն ելանելոյ ։

Ասէ ևս, թէ գիր հասեալ կայ նմա յԱնդխալատորոսէ, որ պատմէ՝ թէ երրորդ * ինքն է մնեալ 'ի Մակեդոնիա ։ Եւ թէ տուաւ նմա իշխանութիւն առանց մաքսի վաճառս փայտից անտի հանելոյ, սակայն ինքն հրաժարեաց, զի մի ինչ յումեքէ յաչաղեսցի . զի առ

* Ըստ ոմանց՝ Յերրորդ աւուր կամ Յերկիս աւուրս կամ Երեք աւուրք են՝ զի մեռեալ է ։ Թէ ոճ բառս զդէպս նորայ ժամանակին առնուն յատակս ։

մակեդոնացին առաւել զգաստութիւն պիտոյ է ։

Եւ թէ որպէս 'ի սովի առաւել քան զհինգ տաղանդ ծախք իւր հաշուեցին՝ վասն չորքաւորաց քաղաքացւոցն զպէտսն մատակարարելոյ · զի զանալ ումեք ոչ գիտէ ։ Եւ եթէ անծանօթք ումանք առ նովաւ իցեն բազմեալ, առնպէ զմի 'ի նոցանէն քուեայս առնուլ՝ հաշիւս արկանել · և անձեցուցեալ զնոսա ցվեցհարեւր առ մինս, եդեալ և անուանս իւրաքանչիւր նոցա 'ի դէպ, գտանէ տաղանդս տասն · և զայն ամենայն նպաստ լինել ասէ յիւրմէ 'ի հանդանակ սեղանոյ նոցա · և յաւելու՝ թէ ոչ արկանէ 'ի համար զվերակացութիւնս պատերազմին նաւացն, և ոչ զայլ ևս հասարակաց պաշտամունս զորս պաշտեաց ձրի ։

Մատուցեալ և առ վաճառա֊

կանաընախր երխւարաց՝ պատճառի գնել. անտի 'ի թանգարանն անցեալ՝ խնդրէ հանդերձս երկուց տաղանդաց, և մարտնչի ընդ ծառային՝ թէ ընդէ՞ր առանց արծաթոյ շղթիս զիմ կնի։ Եւ թէ վարձուք 'ի տան բնակիցէ, իմ հայրենի ապարանք են, տաէ առ անդէտսըն, և վաճառել կամիմ, զի անձուկ է ինձ յընդունելութիւն հիւրոց. և թէ կայ առ նմա ջուր ցուրտ 'ի ջրհորոյ աննման, և պարտէզ ուռճացեալ առատ և փափուկ բանջարօք, և խոհակեր հմուտ 'ի պատրաստութիւն համադամոց, և թէ տուն նորա գոգ իջևան է, քանզի լի է զօրհանապազ. և թէ բարեկամք իւր են կարասն ծակ, զի ամենայն բարեօքն զոր առնէ՝ ոչ կարէ լնուլ զնոսա։

## Է.

## ՎԱՍՆ ԱՄԲԱՐՏԱՒԱՆՈՒԹԵԱՆ

Իսկ ամբարտաւանութիւն է արհամարհել զայլս առ անձամբ : Եւ այնպիսի ինչ որ է ամբարտաւան, զի որ փութայ ստիպաւ խօսել ինչ ընդ նմա, Յետ ընթրեաց եկ, ասէ : Զվէճըս իրաւախնդրաց դատի 'ի ըգնալ իւրում. եթէ յաւագութիւն կոչեսցի, զանպարտապութիւն պատճառեալ՝ հրաժարէ. 'ի բարերարէըն ումեք՝ ախպէ անմոռաց ունել. ոչ ումեք առնու յանձն ինքնին նախ ընդ առաջ գնալ, և վաճառականաց անգամ իբրև վարձկանաց հրաման տայ գնալ սպթուց առ ինքն :

Զճանապարհայն յերթալն խօսի բնաւ ընդ ումեք յորոց պատահենն, այլ գլուխ 'ի վայր

արկեալ գնայ, և ապա դար-
ձեալ կոկոզավիզ շրջի, որպէս
և նմա հաճոյ թուեսցի:

Յորժամ ընթրիս տայցէ բա-
րեկամացն՝ չլինի նոցա հացկից,
այլ միում 'ի հնազանդելոցն
պատուէր տայ հոգ տանել նո-
ցա. և մինչ ուրեք գնալոց իցէ,
կարապետ առաջի արձակէ՝ զե-
կուցանել թէ ահա գայ: Ոչ
յօծանելն, ոչ 'ի լուանալն և
ոչ 'ի կերակուր առնուլ թոյլ
տայ ումեք մտանել առ նա:

Եւ թէ հաշիւք ընդ ումեք
իցեն, պաշտօնէին հրամայէ ու-
նել զհամարն, և գումար ա-
բարեալ դրոշմել 'ի գիրս յիշա-
տակաց իւրոց: 'Ի նամականն ոչ
գրէ՝ թէ Առնիցես ինձ շնորհս,
այլ թէ Կամիմ՝ զի այսպէս
լինիցի, և Առաքեցի առ քեզ՝
առնուլ, և Զի մի այլազգ
լինիցի, և թէ Վաղվաղա-
կի ժամ մի յառաջ:

## Ը․

## ՎԱՍՆ ԳՈՌՈԶՈՒԹԵԱՆ

Գոռոզութիւն թուի թէ իցէ գահաւորութիւն՝ սաստիկ հաւրեալ 'ի բռնակալութիւն ։ Եւ այն է գոռոզ, որ թէ ժողովուրդն 'ի խորհուրդ մտանիցէ՝ ընտրել այլ ևս պաշտօնակիցս իշխանին, յառաջ անցեալ ցուցանէ՝ թէ զինքն արժան է նոցա ինքնակալս լինել. և թէ այլք տասն զոք իշխանակից նմին 'ի մէջ մատուցեն, ինքն կայ պնդի՝ թէ բաւական է մին. և 'ի հոմերական տաղիցն զմին միայն պինդ ունի, զայն եթէ

Չէ բարւոք՝ բազմաց իշխել,
մի ոք և եթ իշխան լիցի.
իսկ զայլսն ոչ գիտէ ։

Իշխել իշխէ և բանս այսպիսիս խօսել, թէ Մեզ պարտ է առանձինն ուրեք յաղագս

այսր 'ի խորհուրդ ժողովել, և հեռի մեկուսի լինել յամբոխէն և 'ի հրապարակէս, և որ 'ի բարձ աւագութեան հասեալս եմք՝ փոքր մի հանգիստ գտանել: Եւ թէ գործիցի ինչ յումեքէ կամ անպատուիցի, կամ սոցա, ասէ, կամ մեզ միայն պարտ է մնալ 'ի քաղաքիս:

Եւ ելեալ զհասարակ աւուրբ, և զլօդիկ իւր արկեալ, և կիսակատուր զհերսն փոքրեալ, և զեղնգունսն որբեալ զգուշութեամբ, մինչ վարէ զհանդիպեալսն, այսպիսի ինչ ասելով. Զմարթի այլ ևս չմարթի կալ 'ի քաղաքիս յերեսաց շողմոգ և քսու բանսարկուաց:

Եւ թէ որպէս անհնարին տառապել յատեանս 'ի ձեռաց դատախազից. և թէ զարմանայ ընդ այնոսիկ՝ որ սպրդին նեղին տանխէթ լինել 'ի գործ հասարակաց, թէ զի՞ արդեւք

խնդրիցեն. և թէ որպէս ծանր և տաղտուկ է այժմ ամենայն ինչ որոց տնօրէնքն են և մատակարարք. և թէ զիարդ ամաչէ 'ի ժողովման՝ յորժամ նըւաստ ոք և գձուձ առ նմա բազմիցի. և յաւելու, Ո՞րբ իցէ՝ զի ոգի առնուցումք. զի ահա կորնչիմք ծախիմք 'ի պաշտամանց սատի և 'ի կազմութենէ հանդերձանաց նաւաց պատերազմի:

Եւ թէ քանի՜ ատելի է ռամկավարաց ազգ: Եւ սկզբնապատճառ չարեաց քաղաքին զթեսեւս ասէ լեալ. զի նա զերկոտասան քաղաքսն 'ի մի ժողովուրդ խառնեալ՝ քակեաց զթագաւորութիւն. և կրեաց զարժանն, զի նախ ինքն կորեաւ 'ի նոցանէն: Եւ այլ ինչ այսպիսի խօսի առ հեւրոն և առ համաբարոյ քաղաքացիս՝ որ 'ի նոյնս միամտեալք իցեն:

## Թ․

## ՎԱՍՆ ՎԽՍՈՒԹԵԱՆ

Վխսութիւն է դաժանութիւն բարուց՝ի բանս․ և վէս այն՝ որ եթէ հարցանիցի թէ ուր է այս անուն, Զի՞ կայ իմ, ասէ, և նորա․ և թէ խօսիցի ոք ընդ նմա, չտայ պատասխանի ։ Եւ ՚ի վաճառելն ինչ՝ չասէ գնելեացն քանոյ տայցէ, այլ խոյզ և խնդիր առնէ թէ զինչ գտանիցէ ։ Եւ որ մեծարիցեն զնա և առաքիցեն ինչ ՚ի տօնս, ասէ ցնոսա, թէ և ճաշակիցէ իսկ ոչ յընծայիցն ։

Ոչ ներէ ամենևին՝ եթէ ոք յանկարծ ակամայ խթիցէ զնա կամ կոխեսցէ ՚ի վերայ նորա ։ Եւ բարեկամի՝ որ ՚ի հանգանակ նպաստ լինել ժտիցէ, Ոչ ունիմ, ասէ, տալ․ ապա առեալ տանի ինչ, Եւ այս ևս արծաթ, ասէ, ահա գնոյ ՚ի կորուստ ։

Եւ թէ գթիցէ յուղւոջ, և քարէն ևս անէծս և նզովս կար- դայ ։ Յանձն ումեք չառնու սպասել օգուտ ժամս ․ ոչ եր- գել կամի յերախանս , ոչ բան արտասանել և ոչ 'ի պարու ան- ցանել ․ և զառ Աստուած ա- ղօթան գլխովն կարօղ է ա- պախտ առնել ։

## Ժ.

## ՎԱՍՆ ԲՐՏՈՒԹԵԱՆ

Բրտութիւն թուի լինել որ-դիութիւն պատշաճից ։ Եւ այնպիսի է բիրտ, զի յետ ըմ-պելոյ խառնակ ինչ զգայուոտ դեղոյ՝ անխիղճ ելանէ 'ի հրա-պարակ ատենի. և զեւղս ոչ քան զծոթրին անուշահոտ ա-սէ լինել, և մեծ քան զոտնն ագանի կօշիկս, և մեծագոչ բարբառի ։

Ընդ սիրելիս և ընդ ընտա-նիսն չվստահի, և զծառայսն իւր առնու խորհրդակիցս իւրոց մեծամեծաց, և յունկն վարձ-կանաց իւրոց մշակաց ագարա-կին հեղու զամենայն իւր ատե-նի ժողովրդեան ։ 'Ի նստելն հանդրիձէ զհանդերձսն 'ի վեր քան զծունկսն՝ մինչև ծանակ կալոյ ։

Չիք ինչ ընդ որ զարմասցի կամ սքանչասցի . իսկ եթէ եղն կամ էշ կամ քօշ 'ի փողոցի տեսանիցէ , զնոյ տեսեալ պշուցեալ նկատէ : Ոչ խորշէ տանուլ ինչ 'ի մառանէ և ուտել և 'ի վերայ ըմպել զանապակն, և ջանայ թաքչել 'ի հացարար կնոջէն , թէպէտ և ընդ նմա իսկ երթեալ աղայ զպէտս իւր և զորոց 'ի տանն իցեն ամենեցուն :

'Ի Ճաշելն՝ միանգամայն և գրաստուցն խոտ արկանէ . և 'ի բախել դրանն՝ ինքն տայ ձայն 'ի ներքուստ , և առ ինքն կոչեալ զշունն և բուռն հարեալ զցուկէն , Ահա է սա, ասէ, պահապան տեղւոյս և տանս և բնակչաց սորա : Եթէ յումեքէ արծաթ առնուցու , ընտրէ զդրամսն , և խառնեալ ընկենու իբրև թեթևս և տըժգոյնս , և այլս ընդ այնր փո-

խանակէ ։ Եթէ ումեք զարօր տուեալ իցէ յանօթ, կամ ըզ-սակառի կամ զմանգաղ կամ զպարկ, 'ի տքնութեան գիշերին զայն ածէ զմտաւ ։ . . .

'Ի քաղաքն ելեալ՝ հարցանէ որում հանդիպին, թէ քանո՞յ իցեն հանդերձք մաշկեղէնք և ապուխտ ձկան, և թէ այսօր իցէ ամսագլուխ վաճառոց․ և անդէն զնովիմբ ածէ, թէ կամի առ վարսավիրայ գնալ վիրալ զհերսն․ և ընդ նոյն ճանապարհ մատուցեալ՝ առնուտանի յԱրքիտաս * ձկունս ապխտեալս ։ 'Ի բաղանիս երգէ․ զկօշիկսն խարխալեալս բևեռակապ սնդէ, կամ կարկատանս 'ի վերայ կարկատանաց արկանէ, և ասէ, թէ Ոչինչ ընդհատ կարծր են քան զեղջեւր ։

* Նպարավաճառ ծանօթ ժամանակին ։

## ԺԱ·

## ՎԱՍՆ ՉԱՂՐՈՒԹԵԱՆ

Չաղրութիւն է անխնամ թողուլ զմարմինն մինչև զզուելի լինելոյ: Եւ զաղէր այն ինչ որ է, որ քոստոտ բորոտ և որքինոտ և վարազացեալ եղնգամբք շրջի այսր անդր. և զայն ամենայն՝ հայրենական ախտս ասէ լինել, զի նոքիմբք և հայրն էր զզածեալ և հաւն. վասն որոյ և ոչ դիւրին ինչ իցէ խառնել ումեք յազգ նորեանց:

Իցեն արդեւք և խոցք և կեղք 'ի խռչակունս նորա և կոճիճք 'ի մատունսն, զորս անդարման թողու՝ զի զայրասցին: Ընութք են նորա դաղանայինք և թաւամազք՝ քաջ 'ի բաց մինչև ցկէս կողիցն և անդր և ս մօրուսախիտ խոզանացեալ. ատամունք սեաւք և մեցոտք,

ժանդատեսիլք և զազրաթորմիք. և այլ ինչ այսպիսի բազում:

Խնչէ 'ի ձորձան , յուտելն՝ խօսել առնու թուալիր՝ և թափէ 'ի բերանոյն , և յըմպելն՝ զգայուէ յերեսս այլոց . և անկեալ 'ի բաստեռուհան անդէն յետ ընթրեացն ննջէ ընդ կնոջ իւրում: 'Ի բաղանիս՝ հոտեալ իւղով օծանի , և խակոյն առնու զհանդերձան : Ծաղիկս խոշորս և բաճկոնս հնոտիս և աղտեղիս՝ զայն արկեալ զանձամբ , ելանէ 'ի հրապարակ :

Եւ 'ի հացին ճառ արկեալ պատմէ , թէ որպէս կոճ վլացի արբեալ՝ 'ի վերուստ և 'ի ներքուստ ժայթքեալ մաքրիցի, և զի 'ի նստածս իւր թխագոյն է մաղձն քան զարգանակն՝ որ անդ 'ի վերայ սեղանոյն : Եւ թէ թքանել կամիցի՝ զսեղանովն 'ի մատուռակ անդր ձգէ զխուխն :

## ԺԲ.

## ՎԱՍՆ ԼՐԲՈՒԹԵԱՆ

Ոչ գժուարին ինչ է սահմանել զլրբութիւն. քանզի խայտառակ և նշաւակելի խեղկատակութիւն է: Եւ այսպիսի է լիրբն, որ եթէ կանանց սպարկեշտից հանդիպեսցի՝ հոլանեալ ցուցանիցէ զաւականն: 'Ի լուեալ այլոց 'ի թատերս՝ ինքն ծափս հարկանէ. և որոց այլք հեշտաբար կան 'ի գինին՝ շչէ 'ի վերայ նոցա. և 'ի հանդարտել տեսարանին՝ վեր ամբարձեալ զգայուս արձակէ, զի զբազմականսն յինքն դարձուսցէ:

'Ի բազմամբոխ հրապարակի մատուցեալ կացեալ առ կաղինս կամ խնձորս և առ այլ միրգս՝ ուտէ և խօսի ընդ վաճառողին, կոչէ յանուանէ զայս ոք և զայն յանցաւորացն՝ որոց

չէ ծանօթ. և եթէ 'ի ձեռն զոք ուրեք տեսանիցէ, բռնադատէ զնա: Եւ որ 'ի մեծի ոք դատաստանի 'ի պարտութիւն մատնեալ գնասցէ յատենէն, ընդ առաջ երթեալ խնդակից նմա լինի ընդ հենդն:

Եւ երբեմն մայրն առ հաւահարց եղանիցէ, հայհոյէ. և լու 'ի լու ընտանեացն իշխէ հարցանել. Ասա մայրիկ, ո՞ր այն օր էր յորում երկնեցեր զիս և ծնար. և յարէ 'ի նոյն. Ո՛րպէս քաղցր է. և որ յերկոցունց յայտնանէ անճաշակն իցէ չմարթի ստանալ մարդ *:

Յաղօթս կամ 'ի նուէրսն ընդ այլս մատուցանել, ընկենու 'ի

* Մթութեան բնագրին հարծես քաղ խանգարանաց. քննելք եմանան ասել, թէ քաղցր և դառն յառաջին քան զծնունդ, և առանց երկուցդ չէք որդեծնութեան:

ձեռաց զօկահն , և որպէս թէ հրաշանշան ինչ գործ գործեալ՝ զքրքիջ բառնայ ։ Իբրև փողով նուագիցէ յերախանս , ինքն ինքեան միայն ծափ զծափի հարկանէ , ցուցս առեալ մրմնջէ , և սաստէ փողար վարձակին , թէ զի՞ չլուես խոկ և խոկ մինչ եսս երգիցեմ ։

Անձամբ եղանէ գնել պատրաստել զհանդերձանս կերակրոյն , սակ արկանէ սրնգահար երգեցիկ կանանց գալ ժողովել 'ի տուն , և ցուցանէ որոց պատահենն զհանդերձեալ համագամանն և հրաւիրէ զնոսա 'ի ճաշ. և կացեալ առ խանութս վարսավիրայից և իւղեփեցաց զրուցէ , թէ գինարբուք մեծ են առ իս այսօր ։

Եւ յընդունելութեան կոչնոցն ցուցանէ հացակցին՝ թէ ո՛վ այն որ հացկատակ իւր իցէ ։ Եւ 'ի նուագս ուրախութեան

բաժակին հրաւէր կարդալով ա-
սէ, կազմ և պատրաստ է
աւասիկ զուարթարարն ամե-
նեցուն որ անդ կցեն. և զայն
եւ եթէ հրամայիցեն, առ դուրս
կայ մանուկն 'ի բողարածէն՝ ա-
ծել և զնա, զի լուիցուք ամե-
նեքեան գուսանութեան նորա
և զուարճասցուք :

## ԺԳ.

## ՎԱՍՆ ՑՈՓՈՒԹԵԱՆ

Ցոփութիւն է սովորութեամբ գործել կամ խօսել զանպատեհսն: Եւ ցոփն վաղվաղուկ է յերդնուլ, և 'ի չարահամբաւելն և 'ի թշնամանել անփոյթ, բարուք գռեհիկ և խենեշ և յամենայնի ձեռներէց : Կարող է և 'ի լրջաց անգամ և առանց դիմակի կաքաւս անառակութեան կաքաւել ընդ պարս կատակագուսան խաղալ կաց : Եւ 'ի խաղս աճպարարաց՝ մատուցեալ առ մի մի իւրաքանչիւր ժողովէ զպղինձ հանդիսականացն . և որ առանց յետկարի իցեն և ձրի տեսլեանցն 'ի գինին կալ ժողցին, մարտնչի ընդ նոսա :

Պանդոխապետ լինի, այլ և բոզաբոյծ, այլ և մաքսաւոր .

և չիք յաղկրատ գործոց յորմէ պատկառեալ խորշիցի ․ այլ քարոզ կարդայ, խոհակերէ, ուլունս խաղայ, շրջի ժողովէ տուրս աստուածոց, գող ըմբռնի, և քան 'ի տուն իւր առաւել 'ի բանտս բնակէ ։

Սորին սակի Թուրին լինել և այնոքիկ, որ կուտեալ շուրջանակի զամբոխ հրապարակին և ձայն արկեալ՝ ուժգին և կերկերեալ բարբառով ճառատիցեն առ նոսա և կարդիցին, և 'ի միջի անդ կէսք գայցեն և կէսք գնայցեն զանց զբանիւքն տարաբեալ, իսկ նոքա արձանացեալ 'ի տեղւոջն՝ ոմանց զբակիզըն ճառեցն պատմիցեն, կիսոց վանդս ինչ և այլոց մասն մի ևեթ, չհամարեալ արժանի տեսիլ առնել զանդդամութիւն լսողեանց, բայց յորժամ ամենաժողով կացուրդք լինիցին ։

'Ի դատաստանս է զի 'ի ջա֊

տագուկել կայ անձին ամբաստա-
նութեանց, է զի դատախազ
մտանէ այլոց, է յորոց յուրաստ
կայ երդմամբ, և է ուր եկեալ
հասեալ յանդիման լինի գըլոց
վճռադրումար 'ի ծոցի և խուրձ
խուրձ տոմսակաց 'ի ձեռին :

Զամաչէ կալ 'ի գլուխ գնդի
փերեզակաց, արծաթ առ ձեռն
տայ նոցա նոյն հետայն 'ի վաշ-
խի, և աւուրն դանկ և կէս 'ի
դրամէ արկանէ նոցա տոկոսիս.
և ապա 'ի խոհանոցս երթևե-
կէ, առ ձկնավաճառս և առ
խունաւագս, և զվաշխս վաճա-
ռաշահին 'ի կլափին ժողովէ :

Դժպհիք են, և բերանք նո-
ցա անկապ անարգել 'ի լու-
տանս. սրտոտախօսք և կար-
կաչոտք, մինչև հրապարակք և
գործարանք անդրէն ընդդէմ
հնչեն նոցա արձագանգ :

## ԺԴ·

## ՎԱՍՆ ՉԱՐԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Չարասիրութիւն ցանկութիւն է չարեաց, և չարասէր այն ոք՝ որ յաճախէ առ դատապարտեալս և պարտաւորս ատենի ժողովրդեան, կարծեալ թէ զնոսա զիւրև ածելով մարթուչ ևս և ահաւորագոյն լինիցի ։ Եւ զառաքինեացն ասէ․ Եհէ՛, իցեն որպէս զխարդ ինչ մարթի․ և թէ, Չիք ոք բարի, և նոյն են ամենեքեան․ և ՚ի սուտ հանէ թէ լաւ ոք ուրեք իցէ, և ազատ զչարն միայն ասէ ։

Եթէ ոք զչարէ ինչ հարցանիցէ զնա, վկայէ՝ թէ զայլն ամենայն արդար ասեն զնմանէ մարդիկ, բայց է ինչ զոր անգիտանան․ զի այր լաւաբարոյ է

նա , ընդընկերասէր և բարխանուն . և երկայնէ Ճառս զնմանէ , որպէս չգտեալ ուրեք այր յաջողակ քան զնա ։

Եթէ 'ի հրապարակ ոք ժողովրդեան 'ի դատ մատնեալ լիցէ կամ դատապարտեալ յատենի , 'ի նոցա թեր ելանէ . և խնդրէ երթալ նստել առ նոքօք և ասել , թէ ոչ արժան է զայրն դատել , այլ զգործն . և զանձնէ ասէ՝ թէ լիցէ շուն ժողովրդեանն՝ զգուշանալ յանիրաւաց . և զի ոչ զոք գտանիցեմք հոգաբարձողս իրաց աշխարհին , եթէ զայսպիսին անտես առնիցեմք ։

Նա՝ և անզգամաց անդամ ժպրհի թիկունս տալ , և յատեանս դարանակալ նստի զօրավիգն գործոց չարաց . և 'ի դատելն զդատաստան՝ զամենայն զբանս ստոյգ 'ի թեւր միտս տանի ։

Համայն ատացեալ, չարաւ-
րութիւն քոյր է չարութեան.
և անսուտ է առակն, նման
առ նմանն երթայ:

## ԺԵ·

## ՎԱՍՆ ԱՆՇՆՈՐՀՈՒ-ԹԵԱՆ

Անշնորհութիւն սահմանաւ առեալ՝ է վարք, որ թէպէտ և առանց վնասու, սակայն նեղութիւն հասուցանէ : Եւ այն է անշնորհ, որ զայն ինչ նիրհեալն մտեալ զարթուցանէ, զի ընդ նմա զբանիւք անկանիցի. և որ 'ի չու կազմեալքն իցեն ընդ իւր՝ արգելու, և մատուցեալ թախանձեցուցանէ անսալ՝ մինչ ինքն վարիկ մի ճեմ առնուցու :

Եւ առեալ 'ի ստընտուէն ըզմանուկն և ինքնին ծամեալ ինչ՝ ջամբէ նմա, և յաւաչս կակուղս պատճառի, և խորամանգադոյն քան զպապն ձայնէ զնա : 'Ի հացկերոյթս զրուցէ, թէ զկրացի կոճ առեալ դեղ

ծրակէս 'ի վեր և 'ի վայր ժահր արձակեցի, և զի սևագոյն 'ի Թըքածս իւր է մաղձն քան զարգանակն՝ որ կայ 'ի սեղանի անդ:

Եւ յականջս իսկ ընդոծնայն յանդգնի հարցանել, Աղէ մայրիկ սամ, յորժամ երկնեցերն զիս և ծնար՝ զի՞նչ այն օր էր. և զնովիմբ ածեալ ասէ. Զխարդ քաղցր է. և առանց ընդ երկուցն փորձ անցանելոյ չէք մարդ ստանալ:

Պարծի ջուր ցուրտ 'ի գբոյ ունել 'ի տանն, և պարտէզ առատաբեր մատաղ խաւարտից, և խահամոք անուշարար կերակրոց. և Թէ տուն իւր իբրև օԹևան բաց է յասպնջականութիւն ամենեցուն, վասն զի խունեալ է յամենայն ժամ. և ծակ կարասն՝ են սփրելիք իւր, զի բնաւ բարերարութեամբք իւրովք չկարէ լցուցանել զնոսա: Եւ իբրև ընԹրիս ուտէք

տայցէ, նշաւակէ հացակցին ըղ-
պատառաբոյծ հացկատակ իւր՝
թէ ով ոք է ։ Եւ 'ի նուագս
խրախութեան խնջոյից ձայն
տալով ամենեցուն, ասէ թէ
մօտ առ ոտս կայ անդ զուար-
թարարն խրախճանացելոցն. և
եթէ և զայն տացեն հրաման՝
աւասիկ հասեալ անդէն առ
կուան կայ մանուկ բոզաւագին,
երթալ ածել մեզ՝ զի առ հասա-
րակ հեշտասցուք 'ի ձայն նուա-
գաց երաժշտականութեան նո-
րա ։

## ԺԶ·

## ՎԱՍՆ ԱՆԱՄՕԹՈՒ-ԹԵԱՆ

Իսկ անամօթութիւն է, զի ընդ սահմանաւ արկցուք, անփոյթ առնել զփառս վասն զօշաքաղութեան: Զի անամօթ է, որ զոր ինքն զրկեաց յառաջագոյն՝ գնացեալ առա խնդրէ փոխ 'ի նմանէ: Եւ իբրև դից զոհիցէ, զմիս զոհին յաղեալ շտեմարանէ, և ինքն երթեալ առ այլում ճաշէ. և կոչեցեալ զսպասաւոր իւր, և առեալ հաց և միս 'ի սեղանոյ անաւի՝ տայ ցնա և ասէ լու 'ի լու ամենեցուն, Ե՛րթ և դու, սիրելի, խրախ լեր:

Զմսոյ երթեալ, յիշեցուցանէ մսավաճառին զոր երբեմն շնորհ ինչ արարեալ իցէ նմա. և առ. կշռոյն կացեալ, միս ըստ

կարի՝ և կամ թէ ոչ՝ գտնէ ունկր ինչ ընկենու 'ի նժարն. և եթէ տացի նմա թոյլ՝ ուրախ լինի, այլ՛ եթէ ոչ՝ շորթեալ 'ի անգանոյն կոտորս ինչ ընդերաց և ժպտելով մեկնի:

Եթէ լուրոց հիւրոցն տեղի 'ի գիտակս տեսլարանաց խաղուց վարձիցի, ինքն ևս ընդ նոսա 'ի տեսիլսն վայելէ առանց գնոյ սակն տալոյ. վաղիւ և զորդիս իւր և զդաստիարակ նոցա առեալ ածէ անդր: Եւ որ տղնիւ ինչ ոք գնոց առեալ տանիցի, թախանձէ հանել և ինքեան անտի մասն:

Յայլոյ տուն երթեալ փոխ առնու գարի, երբեմն և յարդ. և որ տայցենն՝ ստիպէ զնոսա բառնալ տանել զայն ամենայն մինչև 'ի տուն իւր: Զամաչէ և 'ի բաղանիս ձրի մտանել կալ առ սանսն, և մխեալ զդոյլն, մինչ դեռ բաղանեպանն բողոք

թաւնայցէ, հեղու զանձամբ ըղ-ջուրն և ասէ, Թէ Ահա լուա-ցայ, և քեզ ոչ ինչ է աստ շը-նորհ: Եւ ելեալ գնայ կորնչի:

## ԺԻ.

## ՎԱՍՆ ԶՕՇԱՔԱՂՈՒԹԵԱՆ

Զօշաքաղութիւն է ժողովել շահս անպատեհս ։ Եւ այնպիսի է զօշաքաղն, որ եթէ հաց տայցէ՝ չդնէ 'ի սեղան բաւական նկանակս. հիւր՝ որ առ նմա իջեւանեալ իցէ՝ փոխ առնու 'ի նմանէ. 'ի բաշխելն բաժինս յընթրեկերս, Արժան է, ասէ, կրկին մասունս տալ մատակարարին. և անդէն առեալ դնէ առաջի իւր ։ Գինի եթէ վաճառեսցէ, բարեկամին ևս ջրախառն տայ ։ 'Ի թատրոն յայնժամ երթայ հանդերձ որդւովք, յորժամ հանդիսադիրքըն ձրի թողացուցանիցեն ։

Իբրև հրեշտակութեամբ ուրեք ընդ այլս առաքիցի յիշխանութենէն, զթոշակ ճանա-

պարհէն տուեալ նմա 'ի քաղաքէն՝ 'ի տան Թողու, և յուղեկցայն փոխ մուրանայ։ Ծառային խրում բառնայ բեռն 'ի վեր քան զկար, և սակաւ քան զայլոցն տայ նմա պակէտն։ Եւ որ ինչ նմա անկանի տալ հիւրոյթ ասպնջականին իւրում, զայն ևս 'ի նոցանէն * խնդրեալ՝ երթայ վաճառէ։

Յօծանելն 'ի բաղանիս, ժահահոտ է եւղդ զոր գնեցեր ինձ, ասէ ցմանուկն, և օտարին իւրով օծանի։ Թէ ոք յընդոծնացն գտանիցէ պղինձ 'ի փողոցի, չպատկառէ հայցել և իւր մասն, ասելով թէ Հերմէս հասարակաց է **։ Զպարեգօտն իւր տուեալ 'ի լուացումն, երթայ առնու յանօթ 'ի ծանօթիցն,

* Յուղեկցաց անտի։

** Հերմէս դիք էին և վաճառականաց և գողոց։

և զայն տգանի յերկարեւ֊
ղբաղում աւուրս մինչև անդ֊
րէն յետս պահանջեսցի ։ Եւ
այլս այսպիսիս ։

Ճշգաչափ և բարձրայատակ
ամանով ինքնին բաժանէ ըն֊
տանեացն զպէտսն , քաջ հար֊
թելով զերեսս թաթաղուն ա֊
նօթոյն ։ Դիւրագին առնու 'ի
բարեկամէն , և երթայ վաճա֊
ռէ մեծագնի ։ 'Ի հատուցա֊
նելն զպարտս քառասուն մնա֊
սուց՝ խորէ դրամս չորս ։

Եթէ առ հիւանդութեան
չգնայցեն մանկունք իւր ա֊
ւուրս ինչ 'ի դպրոց , ըստ նմին
չափոյ հատանէ զվարձսն . և
զԱնթեստիրիոն ամիսն ողջոյն
չյղէ զնոսա յուսումն՝ վասն ան֊
տարանաց թատերցն յաճախե֊
լոյ , որպէս զի մի զվարձս ամ֊
սոյն բովանդակ տայցէ ։ Յոր֊
ժամ'ի ծառայէն հաս առնու֊
ցու , 'ի նմանէ տուգանէ ըղ֊

տոյժս դրամոյն • զնոյն առնէ և յորժամ'ի գործակալէն համարս առնուցու :

Իբրև կոչունս առնիցէ երդակցացն , 'ի մի՛ջոյ անտի կերակրոյն բաժին խնդրէ որդւոց իւրոց • և զկէսս անդամ բողկից՝ զկոտորոց սեղանոյն ընդ գրով արկանէ , զի մի՛ ապաաահարկումանկտին դողանայցէ : Ուղեկից լեալ ուրեք ընդ ծանօթս իւր , նոցա ծառայիւքն պաշտի 'ի պէտսն , և զիւրն 'ի վարձու տայ յայնժամ հեռի ուրեք , և ըղգինան ոչ բերէ 'ի ծախս հասարակաց :

Եթէ հանդամանաւք 'ի տան նորա լինիցին , 'ի համարի առնէ և զոր յիւրմէ անտի արկանիցէ փայտ , պտղան , աղ , քացախ և ձէթ 'ի ճրագ : Յորժամ 'ի սիրելեացն ոք՝ իւր կամ դըստերն հարսանիս առնիցէ , աւուրբք ինչ յառաջ անձապորէ

խոյս տայ 'ի քաղաքէն, զի մի՛ և ինքն օժտաբեր ընծայատար լինիցի։ 'Ի ծանօթիցն զայն ինչ իրս առնու 'ի փոխ՝ որ բնաւ և չպահանջիցին յետս. և եթէ դարձուսցէ ևս՝ ոչ ումէք փոյթ լինիցի առնուլ։

## ԺԸ.

## ՎԱՍՆ ԱԳԱՀՈՒԹԵԱՆ

Ագահութիւն է չգիտել զպատիւ անձին՝ որ ծախուքն լինիցի: Եւ այնպիսի ինչ ոք է ագահն, որ զի թէ յողբերգակացն յաղթանակ տարցի՝ պսակ փայտեղէն նուիրէ Սպանդարամետին, մակագրեալ յանուն իւր *: Իբրև տուրք մատուցին ՚ի ժողովս ժողովրդեան, ինքն լուռ կայ, և կամ յարուցեալ ՚ի մէջոյ անտի զանձն արտաքս ճողոպրէ:

* Ողբերգական երգողացն մրցանաց յաղթութեան՝ մեծ էր յոյժ ՚ի ժամու Հելլենացւոց, և գովութեան նուէրս փայլին սպանդարամետական դիցն, յորոյ ՚ի տափի-փօնիցն կապարէին այն հանդէսք թատերաց:

'ի հարսանիս դստերն՝ զա-
մենայն միս զոհին, բայց 'ի նուի-
րականացն, տարեալ վաճառէ.
և հարսանեացն ապաստուորս 'ի
վարձու ունի առանց ուռճկաց։
Իշխան նաւապետ կացեալ 'ի
պատերազմի, զղեկավարին ան-
կողնման տայ արկանել իւր 'ի
պաղպաջուման, և զիւրն խը-
նայէ ։

Յորժամ աւուրք ընծայաբե-
րութեան իցեն մանկանց առ
վարժապետն, չառաքէ զնոսա
առ նա, պատճառելով՝ թէ
խօթ իցեն. զի մի նպաստ 'ի
հանդանակն լինիցին։ Եւ 'ի
վաճառանոցէ առեալ պաշարս,
միս և խաւարտս, ինքնին յան-
թի հարեալ տանի։ Եւ եթէ
զպատմուճանն 'ի լուացս տայ-
ցէ, 'ի տան նստի։ Եւ իբրև
ազդ լինիցի նմա՝ թէ բարեկամն
հանդանակ ժողովիցէ, յառա-
ջագոյն զգուշացեալ խոտորի 'ի

նմանէ զճանապարհայն, և երկայն շրջանաւ գնայ մտանէ 'ի տուն իւր :

Կնոջ իւրում, որ և պռոյգ մեծ իցէ բերեալ նմա, ոչ առնու գնածոյ նաժիշտս, այլ մանկիկ մի արբանեակ 'ի վարձու առնէ նմա 'ի պէտս՝ յոր ժամ 'ի կանանոցէն 'ի դուրս ելանիցէ: Յարուցեալ ընդ այգն ինքն ածէ աւել տանն և զմահիճսն յարդարէ : Եթէ նստել ուրեք հասանիցէ, բաղմական արկանէ իւր զգրգլեակն՝ զոր զգեցեալն է *:

* Զի մի կարծի նոր պաշտօնեայ բաղմոցակիր, որպէս օրէն էր մեծապատւոյ : Յոյնն առ յոյժ համառօտութեանն մթայլ ունի. մարթ է նա թարգմանել, „ 'Ի նախնեացն՝ խորշակաց 'ի մի կողմ պարուրէ զգրգլեակն՝ զոր զգեցեալ է.„ զի մի մաշեսցի կամ աղտեղասցի :

ԺԹ.

## ՎԱՍՆ ԿԾԾՈՒԹԵԱՆ

Կծծութիւն է յանդէպս խնայել և ճշդել զծախս : Եւ կծծի է, որ և յետ ամօթոյ չզանգաղեալ ելեալ գնայ 'ի տուն պարտապանին պահանջել զկէս դանկ իւր : 'Ի միաժողով ճաշկերոյթս տոհմայնոց՝ թուէ ըզբաժակս իւրաքանչիւր զոր ըմպեն, և նուազ քան զամենայն հացակցացն հանէ նուէրս Արտեմեայ * :

* Յամենայն ամսեան այս օրէն էր, հանել երախայրիս կամ նուէրս փառաւութեան դիցն Դեմետրի և Աղանդարամետին. Իսկ 'ի ճաշս տոհմայնոց, որ էր երիր մասն ընղի, Արտեմեայ նուէրք ընծէին. որպէս և յարութեան լաւին հասանել մանկանց՝ սմա հանեալ զոհս

Որչափ և դիւրագին ինչ որ հաճոյից գնեալ, նա տակաւին Ղատ է, սակ է, շատ: Եթէ ծառայն պոյտն ինչ կամ պտուտնարդ բեկանիցէ, 'ի ոտնկէն նորա տուժէ: Եթէ յանկարծ բնիոն մի անկեալ 'ի կնոջէն կորնչիցի, վեր 'ի վայր հարեալ վրդովէ զամենայն կահս տանն և զմաշիձս և զարկեղս, և ընդ ամենայն խորշս և ծածուկս խիլ արկեալ որոնէ: Իբրև վաձառիցէ ինչ, այնքանոյ տայ՝ զի մի' ինչ շահեացի գնոյն:

Զատոյ թոյլ և ոչ թուղ մի ուտել 'ի պարտիզէ իւրմէ, ոչ ընդ ատւարակ իւր անցանել և ոչ ձէթ մի կամ արմաւ 'ի գետին անկելոյն բառնալ: Եղանէ շրջի զօր ամենայն այգ և խնդիր առնել իւրոց առհմա-

և ընէրոն կորեալ, այնպէս 'ի տոհմն խառնէին:

նացն ցանդոյ՝ եթէ անխախուտ կայցեն ։ Ոչ ինչ խղճէ որ ՚ի յօրանել զհատուցումն պարտուցն, և ՚ի վաշխիցն շարխատս պահանջէ ։

Եթէ խրախուճս ժողովրդականացն առնիցէ, զխորտիկմն մանր մանր կոտորեալ՝ այնպէս մատուցանէ ՚ի սեղան ։ Իբրև զուտեստ ելանիցէ, առանց ինչ ստանալոյ դառնայ ՚ի տուն ։ Պատուէր տայ կնոջ իւրում մի՛ վատնել զաղ, մի՛ զպատրոյգ, մի՛ զչաման, մի՛ զգուխրակ, մի՛ զպաշտխպս, մի՛ զթեւս և մի՛ զպաթերս ․ զի այդ մանունքդ, ասէ, մեծ լինին ՚ի գլուխ տարւոյն ։

Համայն ասել, որ ժլատ և ախշտն իցեն, զնոցա և զգանձանակմն է տեսանել ճճեկերս բորբոսեալս, և զքանալիսն ժանգահարս, և զնոսա գլխովին՝ զի զգենուն ըստ կարի հան-

գերձս նեղս և կարճս, 'ի փոք֊
րիկ և 'ի գոյզն սրուակէ լնուլն
օծանելին, գերծուն մինչև ցմորթ֊
մարմնոյն *, և զմիջաւուրբ բո֊
կանան: Եւ առ Թափիչսն եր֊
Թեալ գուն գործեն՝ զի ձորձ
իւրեանց ընդ բաղուռ կաւ ե֊
կեսցէ, որպէս զի մի՛ ապա փու֊
Թով աղտեղասցի:

* Իմա, այնպէս պան քերԹել՝
զի մի ապէտ վարսավիրայ կարօ֊
տասցին: Եւ 'ի չհասանել ա֊
րեան բոլանան՝ զի մի օրն ապէտն
հնասցին:

# Ի.

## ՎԱՍՆ ԿԱՍԿԱԾՈՏՈՒ-ԹԵԱՆ

Կասկածոտութիւն է կարծիք վնասուց յամենեցունց: Եւ այն որ է կասկածոտ, որոյ աւաքեալ զմտունն 'ի գնել զպէտսն, դարձեալ այլ ծառայ զկնի արծաթէ՝ լրտեսել թէ քանոյ առնուցու: Յուղն ուրեք ինքն բառնայ զարծաթն, և վտաւանէ 'ի վտաւան նստեալ համարի:

'Ի մահիճսն հարցանէ զկին իւր, եթէ աղխեա՞լ իցէ զարկղն և կնքեալ զտապանակն, և նիգ դրաց գաւթին արկեա՞լ իցէ. և թէպէտ նա այո՛ ասիցէ, այլ տակաւին ինքն իսկ յարուցեալ յանկողնոյն մերկ և բոկ, ճրագ լուցեալ, շուրջ գայ տեսանել

զայն ամենայն, և այնպէս հազիւ հազիւ 'ի քուն մտանէ ։

'Ի փոխառուաց իւրոց համգերձ վկայիւքն երթայ խնդրել զվաշխսն, զի յուրաստ լինել մի կարասցեն ։ Զձորձս իւր չհամարձակի տալ Թափչի՝ որ ճարտարագոյնն իցէ, այլ որում երաշխաւոր հաւատարիմ կայցէ ։ Եւ յորժամ գայցէ ոք խնդրել սպասս ոսկւոյ և արծաթոյ, բազումայն է զի չտայ. իսկ եթէ ընտանի ոք իցէ և կարևոր, գրեթէ 'ի բռնս փորձեալ և կշռեալ և երաշխաւոր ևս գոգցես առեալ, այնպէս հազիւ ուրեմն տայ յանօթ ։

Սպասաւոր՝ որ ընդ նմա շրջելոց իցէ 'ի քաղաքին, պատուիրէ նմա առաջի իւր գնալ և մի զկնի, զգուշացեալ՝ թէ գուցէ զճանապարհայն փախիցէ 'ի նմանէ ։ Եւ որ գնոց առնուցուն ինչ 'ի նմանէ և ասիցեն,

Գրեա՛ քանի ինչ պարունմս, զի չժամանեմ առաքել զարծաթդ, Անհոգ լեր, ասէ, զի թէ և ժամանիցես, սակայն ես եկից զկնի քո ։

# ԻԱ․

## ՎԱՍՆ ՏՐՏՆՋՈՏՈՒԹԵԱՆ

*Տրտնջոտութիւն է ըստգտանել ինչ և 'ի տուրս բարեաց : Եւ նա է տրտնջօտ, որ եթէ բարեկամն իւր բաժին տայցէ տանել առ նա 'ի կոչնոցն, քրթմնջէ առ նուիրաբերն, Յաչաղեցեր յինէն զթանգ և զգինեակդ, և չեղաք արժանի ընթրեացդ ընդ հրաւիրեալսն : Եւ առ համբոյրս տարփաւորի, Զարմանամ, ասէ, եթէ ոչ սերտիւ սիրեցես: Եւ Դիայցասնու՝ ոչ զի անձրևէն, այլ զի անագան :*

*Ըստ բախտի քսակ լի գտեալ յուղւոջ, Եւ զի՞ է, ասէ, ոչ երբէք գանձ գտի : Եթէ պատուական ծառայի գինս հատանիցէ, յետ թախանձանօք պարտասեցուցանելոյ զվաճա-*

ւողն, Զարմանք են, ասէ, այդ-
քան անարգ գինքդ, եթէ ան-
պատ ինչ ոք էր դա։ Եւ որ
աւետիս խնդութեան մատու-
ցանիցէ նմա, թէ որդի ծնաւ
քեզ, Ցաւե՛լ, ասէ, զճշմարիտն
և ասա, թէ կէս ընչիցդ գնաց։

Եթէ և ամենայն վճռովք ա-
տենին յաղթեսցէ 'ի դատի,
տակաւին խծբծէ զփաստա-
բանն իւր, իբրև բազում ինչ
յիւրոց իրաւանցն զանց արա-
րեալ 'ի գրի հարկանելոյ։ Յոր-
ժամ սիրելիք իւր հանգանակ
արկանիցեն վասն նորա, և ա-
սիցէ ոք եթէ ուրախ լեր, Եւ
որպէս, ասէ, ուր զարծաթ
իւրաքանչիւր հատուցանելկայ
և 'ի վերայ այնր շնորհապարտ
ևս լինել որպէս երախտաւոր։

## ԻԲ.

## ՎԱՍՆ ՇԱՂԱԿՐԱՏՈՒԹԵԱՆ

Շաղակրատութիւն է շատախօսութիւն երկայն և անխորհուրդ բանից։ Եւ շաղակրատ է, որ առ ընթեր բազմեալ անծանօթի ուրուք, սկիզբն առնէ նախ զկին իւր նաղաբանել, ապա երազ պատմէ՝ զոր տեսեալ է 'ի գիշերին, ապա որ ինչ ընթրիս ուրեք անցք անցեալ իցեն, զամենայն մի ըստ միոջէ 'ի ճառ արկանէ ։

Ապա յետոյ իբրև բանն սաստկանայ, խօսել առնու՝ թէ մարդիկ ժամանակիս չարք են և յոռիք քան զհինսն, և թէ ցորեան թեթևագին է 'ի վաճառս, և թէ եկք օտարք եկեալ խռնեալ են յոյժ 'ի քաղաքն. և զի ծովլ յետ սպան-

դարամետական տօնիցն Նաւասարկելի է, և զի թէ անձրև տայցէ Արամազդ՝ բարի կայծ լինիցի արտորէից, և զի 'ի գալ ամին գործելոց է զադարակ խոր, և զի դժուարին է զկեանս պաճարել. և թէ զայն ամ Դամիպպոս կանգնեաց զմեծագոյն ջահն 'ի տօնս խորհրդակատարութեանցն Դեմետրի, և թէ քանի՛ սիւնք իցեն թատեր երգարանին, և թէ երէկ փախեցի, և թէ այսօր քանի՛ է ամսոյն, և թէ դեմետրեան խորհրդատօնքն 'ի Բոէդրոմիոն ամսեան են և քանթապատիրքն 'ի Պիանեփսիոն, իսկ 'ի Պոսիդէոնին ագարակային սպանդարամետականքն։ Եւ եթէ երկայնամիտ ոք լինիցի առ նա, չմեկնի բնաւ 'ի տեղւոջէն։

Յայսպիսի մարդկանէ զերծուպուրծ 'ի բաց պարտ է որանալ, եթէ չկամիցի ոք տեն-

դիւ ջերանիլ․ զի որ ոչ զպարապոյ ժամն գիտեն ընտրել և ոչ զանպարապութեան, ընդայնպիսեացն գործ է ժուժկալել։

## ԻԴ.

## ՎԱՍՆ ՇԱՏԽՕՍՈՒԹԵԱՆ

*Եթէ շատախօսութիւն ոք սահմանել կամիցի, թուի լինել անժուժութիւն խօսից : Եւ այնպիսի շատախօսն է, որ եթէ հանդիպեսցի ումեք՝ որ տայցէ ինչ նմա զրոյց, Այդ ոչ ինչ է, ասէ, ես գիտեմ զամենայն, և եթէ անսաս՝ պատմեցից: Եւ 'ի տանել միւսոյն զբանսն յառաջ, Իմացայ, ասէ, հասկացայ, կա՛ց, մի՛ մոռասցիս զոր ասելոցդ ես. քաջ է, յուշ ածեր ինձ . այդպէս է ամենեւին . տե՛ս որպէս օգուտ է խօսելն . վա՛հ զոր մոռացայ . փութով հասեալ ես իրացն, հա՛ մաղուց և ես այդմ ՚ինայի՝ տեսանել եթէ գայցես և յայն ինչ զոր եսս գիտեմ : Եւ այլով այսպիսաբար հինիւ թափ ան-*

կեալ 'ի բանս , չտայ ում և պատահէն ոգի կլանել ։

Եւ երբև այսպէս զամենեսեան վհատեցուցանէ , գնայ մտանէ համարձակ 'ի կաճառեալ ակումբս ատենից , և 'ի մէջ խորհրդականութեանն զնոսա 'ի փախուստ ցրուէ ։ Եւ 'ի վարժարանս իսկ և 'ի կուսանոցս մտեալ՝ խափանէ լենի հրահանգաց մանկտւոյն , և մատուցեալ զրուցատրէ ընդ մանկավարժսն և ընդ մարտուսոյցսն ։ Եւ եթէ ասիցէ ոք թէ գնամ, զհետ նորա ելանէ գայ մինչև 'ի տուն նորա ։

Խրաշէկ լեալ խնդրոց ժողովոյն , լու առնէ այսր անդր • պատմէ այսմ այնմ զմաքառումն որ առ Արիստոփոնիւ եղև * , և զլակեդեմոնացւոցն

* 'Ի մէջ Դեմոսթենի և Եսքինեայ հռչակաւոր վէճ ատենական

մարտս պատերազմաց՝ որ առ-
Ալեքսանդրիւ, և զոր ինքն եր-
բեմն գովութեամբ խօսեալ ի-
ցէ Ճառս 'ի ժողովրդեանն. և
յասելն անդ չարախօսութիւն
խառնէ զամբոխէն, մինչև կամ
մռանալ բնաւ ունկնդրացն,
կամ 'ի քուն լինել, և կամ
մինչ դեռ տակաւին բանքն 'ի
բերան իցեն՝ թողուլ և 'ի բաց
գնալ:

Դատ եթէ վարեսցէ ընդ այլս,
արդելու զընկերսն 'ի դատելոյ.
'ի թատերս ընդ այլոց պատա-
հեալ՝ խափան լինի տեսութեա-
նըն. տաճարակից խրախճա-

յաղագս պատմէն, ուր զատ ինչ յա-
ռաջ գան զառաւրս Թէոփրաստէ:
Այս՝ և լակեդեմոնացւոցն էր,
որով զրաւ էին պեղոպոնեսեան
էաղմամբայ պատերազմին, զորոյց
պատառաեալ էին և քաղաքականօթն
ամենեցուն:

նաց հանդիպեալ՝ ուտել չթո-
ղացուցանէ :

Որպէս զի դժուարի՛ն է լռել շատախօսի , և իբրև 'ի լպիրծ կայ լեզուն . Թէ և քան զծի-ծառունս կարկաչոտ յանդի-մանեսցի լինել, ոչ լռեսցէ : Եւ իւրում իսկ մանկտւոյն խաղ եղեալ՝ համբերէ , յորժամ 'ի նիրհ անկանել նորա ձայն տա-ցէ ոք 'ի նոցանէն և աղաչիցէ , Թէ պատմեա՛ ինչ մեզ, հայրիկ, մինչև առցէ զմեզ քուն :

## ԻԴ․

## ՎԱՍՆ ՍՏԱՅՕՂՈՒԹԵԱՆ

Ստայօղութիւն է կցկցել իր և բան սուտ ըստ քիմս։ Եւ ստայօղ բարք այն է, որ'ի հանդիպել բարեկամին առ ժամայն ձևանայ և ժմտելով հարցանէ․ Ուստի՞ գաս, զի՞նչ բանք են, իցե՞ն ինչ զրոյցք յաղագս այսր կամ այնր։ Եւ անդրէն վերըստին հարցանէ․ Չիցե՞ն ինչ զրոյցք նոր․ և սակայն աւետիք բարեաց են։ Եւ չիմացեալ պատասխանւոյ, զկնի կցէ․ Զի՞նչ ասես, չլուա՞ր ինչ․ խնջոյս իմն ուրախութեան թուիմ մատուցանել քեզ նորանոր զրուցիւքս։

Եւ անդէն առ ձեռն պատրաստ կայ նմա զօրական ոք կամ մանուկ Աստիոյ փողարի

կամ Լիւկոն Ճարտար 'ի նմին
խակ 'ի պատերազմէն եկեալ *,
յորմէ և ես խնքն լուայ, ասէ:
Զի այնպիսի վկայք են նորա
քանիցն երաշխաւորք, որոց ոչ
ըստգիւտ ինչ ոք ունիցի գնել:

Արդ սոքա պատմեցին ինձ,
ասէ, եթէ որպէս Թագաւորն
և Պոլիսպերքոն Ճակատ տու-
եալ յաղթեցին, և ձերբակալ
եղև Կասանդրոս**: Եւ թէ ա-
սիցէ ոք ցնա, Հաւատամ դու

* Զիրս և զանձինս խորոյ ժա-
մանակին յառաջ օրինակի ածէ Թէո-
փրաստ:

** Թագաւորն էր Արիդէոս եղ-
բայր Աղեքսանդրի Մեծի, խոկ Պո-
լիսպերքոն զօրավար Աղեքսանդրի.
որոց մարտուցեալ 'ի պարտութիւն
մատնեցան առաջի Կասանդրի.
Իսկ այս զրոյցք սուտք են 'ի պատ-
խօսէն յօդեալք ըստ հակառակի ի-
րացն ճշմարտութեան:

այդոցիկ, ասէ. Քաղաքս ող-
ջոյն հնչէ համբաւովն, և ե-
լանէ երթայ հռչակ. զի ամե-
նայն ինչ զմի զայդ գոչէ:

Զայս զկուսոյն պատմէ, և
թէ նախաճիր մեծ գործեալ է.
և թէ այն իսկ նշան լինի նմա,
զի որոց մատն է յիրս աշխար-
հին՝ զամենեցուն նոցա զերեսս
պլլադունեալ տեսանէ: Ասէ
ևս, թէ լուաւ զի առ նոսա
թաքուցեալ կայ 'ի տան զա-
ւուրս հինգ այր ոմն եկեալ 'ի
Մակեդոնիոյ՝ ամենայնի ակա-
նատես: Զայս ասացեալ՝ աղի-
տանայ, իբրև 'ի սրտէ ողորմու-
կիս արկանէ. Զի՞նչ թուի
ձեզ, ասէ. վա՜հ եղուկ Կա-
սանդրոս, ո՜հ թշուառական.
առնուցո՞ւս 'ի միտ՝ զինչ է բախտ:
Այպա գամագիտ այնուհետև
բանիցն լեալ, 'ի վերայ բերէ.
ԱՅԼ զայս դու միայն գիտաս-
ջիր, ասէ. և ընթացեալ ընդ

քաղաքն ողջոյն զնոյն զորոց այս ամենեցուն ։

Զարմացեալ եմ ընդ արագ ընդ այդոսիկ ․ զի՞նչ արդեւք խնդրիցեն զառասպելով կարկատելով․ զի ոչ միայն սուտ խօսէն, այլ և ձեռնունայն ելանեն ։ Զի և բազում անգամ մինչ դեռ ումանք 'ի դոցանէ ունկնդիրս զինքեամբք խմբէին 'ի բաղանիսն, զհանդերձսն կորուսին․ և կէսք 'ի Ստոյիկեան գաւթին ընդ ծով և ընդ ցամաք ճամարտակելոցն յաղթանակ կանգնեալ, ատենադանց դատեցան *․ են և որ բանիւք քաղաքս առին քաջաբար, և առանց ընթրեաց մնացին ։ Արդարև ողորմելի են կեանք նոցա ․ զի ո՞ր գաւիթ, ո՞ր կրպակ

* Պարտաւորեցան, տուգանեցան վասն չերևելոյ յատենի ըստ կոչին եղելոյ ։

և ո՞ր կողմ հրապարակին կայցէ, յորում զցերեկն ամենայն չդեգերիցին նոքա՝ խեղդ արկեալ բանիւք ստութեան թափել զոգիս ամենեցուն որ դնիցեն նոցա ունկն :

## ԻԵ·

## ՎԱՍՆ ԱՊՇՈՒԹԵԱՆ

Ապշութիւն սահմանաւ ասացեալ՝ է դանդաղութիւն մտաց 'ի բան և 'ի գործ։ Եւ ապուշ այն ոք է, որոյ ինքնին հաշիւս ինչ և գումար արարեալ քուէիւք, ցայն որ մերձն բաղմեալ իցէ հարցանէ՝ թէ քանի՛ առնիցէ։ Եւ եթէ յատենի կալ հասանիցէ 'ի պատասխանիս ամբաստանութեան, ուշամոռաց եղեալ յագարակ իւր գնայ։

Յորժամ թատերաց 'ի զնին կայցէ, խոր 'ի քուն ըմբռնեալ մինչև յարձակիլ ժողովոյն միայն գտանի։ Շատակերութեամբ շուայտեալ, և գիշերային արտաքս ելեալ 'ի կարիս որովայնի, խածանի 'ի շանէ դրացւոյն։ Առեալ ինչ ինքնին դնէ 'ի տե-

զի ուրեք, և ապա 'ի վեր և 'ի վայր յուղէ զայն և չկարէ գտանել։

Իբրև զեկուցէ ոք նմա, եթէ այս անուն բարեկամ քո վախճանեցաւ, զի 'ի թաղումն երթիցէ, տրտմեալ և յարտասուս հարեալ, ապա ասէ, Ի՛հ բարի է։ Ոչ այդչափ միայն, այլ և եթէ զարծաթ իւր առնլոց իցէ 'ի պարտապանացն, վկայս ընդ իւր տանի։

Եւ ձմերանի կադի ընդ ծառայն, թէ ընդէ՞ր չգնեցեր մեզ ձմերուկս։ Զմանկունս իւր տագնապաւ ստէպ վարեալ յարշաւ և յըմբշամարտս, վաստակաբեկ և տաժանակոծ 'ի ցաւս արկանէ։ Եւ յանդի եթէ ինքն ոսպնաթան եփիցէ, երկիցս արկեալ աղ 'ի պղյան՝ անուտելի առնէ։

Եւ իբրև Արամազդ անձրևտայցէ, Քաղցր է, ասէ, նշմա-

րեւ զաստեղս , Թէպէտ և այլք ասիցեն՝ թէ կուպրոյ նման սեաւ են երկինք : Եւ հարցեալ յումեքէ , թէ քանի՞ ինչ մեռեալս կարծիցես հանեալ այսօր ընդ դուռն Շիրմաց , Որչափ ինձ և քեզ բաւական լինիցին , ասէ :

ԻԶ.

## ՎԱՍՆ ԱՆԺԱՄՈՒԹԵԱՆ

Անժամութիւն է չընտրել զդէպ ժամանակ, որով այլոց վիշտ հասանէ: Եւ անժամ է, յորժամ ոք եկեալ բան և խորհուրդ 'ի մէջ առնուցու զիրաց իւրոց ընդ այնպիսումն՝ որ անպարապն է յիւրոց ծանր զբաղմանց: Նա՝ և զննջեալն երթեալ յարուցանէ, զի զրուցատրեսցէ ընդ նմա. և որ 'ի չու կազմիցին՝ խափանէ, և մատուցեալ խնդրէ՝ զի սպասեսցեն մինչ ինքն զգնայցէ:

Եւ յորժամ սիրուհին իւր ջերմացեալ դնիցի, ցուցս և կայթս առ նմա յօրինէ. և որ վասն երաշխաւորութեան 'ի տուգանս մատնեալ իցէ յատենէ, մատուցեալ աղաչէ զնա՝ առնուլ զինքն յերաշխի. և

յորժամ վճիռ դատին հատանել և վճարեալ իցէ, յայնժամ գայ հասանէ վկայ լինել։

'Ի հարսանիս հրաւիրեալ, անդ սկսանի զազգէ կանանց չարախօսել։ Որ յերկայն ուղևորութենէ այն ինչ մտեալ իցեն, զնոսա հրաւիրէ գնալ շրջագայել ընդ իւր։ Եւ զոր միանգամ վաճառեալն իցէ յառաջագոյն, կարօղ է 'ի վերայ այնր և այլ ևս ածել կացուցանել առգնողս՝ որ առաւել տայցեն նմա զգինսն։ Եւ որ լուեալ և ուսեալ ինչ իցեն կանխաւ, յառնէ զնոյնս 'ի բնէ վարդապետել նոցա։ Մտադեւր հոգայ զոր չկամի ինչ ոք թէ առնիցի, բայց ամաչէ ասել թէ մի՛։

Որ զոհս համեալ իցեն և ծախիցեն 'ի կոչունս, առ նոսա երթեալ կոտոր մի մուրանայ։ Եթէ ծառայ գան ըմպիցէ, կա-

ցեալ առ նմա պատմէ՝ թէ և
իմ մանուկ երբեմն այսպէս
բռաղոհ եղեալ, չոգաւ խեղդ-
աւ: Խրատարար կացեալ, մինչ
դեռ կողմանքն երկոքին 'ի հաշ-
տութիւն գալ հաւանեալք ի-
ցեն, նա զնոսա ընդ իրեարս
արկանէ: Եւ պարել կամեցեալ,
զայն որ չև իցէ ընդ գինիս մը-
տեալ՝ զձեռանէ առեալ ձգէ:

## ԻԷ.

## ՎԱՍՆ ԸՆԴՎԱՅՐԱՀՈԳՈՒԹԵԱՆ

Ընդ վայրահոգութիւն թուի անշուշտ լինել բան և գործ 'ի ցոյց լաւակամութեան ։ Եւ այնպիսին է ընդվայրահոգ, որ յարուցեալ խոստանայ զոր չկարէն . և թէ ամենեքեան հաւանին իմիք արդար լինելոյ, նա զմիոյ իմեքէ հակառակութիւն յարուցեալ՝ յանդիմանի։ Հրաման տայ ծառային խառնել գինի առաւել քան զոր կոչնականքն կարեն ըմպել ։

Կռուելոց կրձիմ ընդ մէջ անկեալ, եւ առաւել բորբոքէ։ 'Ի ճանապարհ յոր ոչ գիտէ՝ առաջնորդ մատնէ, և ապա չկարէ ելս աղագս գտանել ։ Մատուցեալ հարցանէ զզօրագլուխն . Ե՞րբ ճակատ յօրինես֊

ցէ և զի՞նչ տացէ հրամանն յետ վաղուէին ։ Եւ առ հայրն երթեալ պատմէ, թէ մայրն արդեւս 'ի քուն է 'ի սրսկապանի անդ ։ Եթէ բժշկին պատուէր եդեալ իցէ չտալ գինի տապացելումն, ինքն Տո՛ւք, ասէ, զի զփորձ առնուլ կամիմ՝ թէ 'ի լաւ անդր շրջեցի՞ արդեւք հիւանդն ։

Եթէ ուրուք կին մեռանիցի, արձանագրէ 'ի վերայ շիրմին զանուն զառնն նորա և զհօրն և զմօրն և զնորին ինքեան ընդկնոջն, և թէ որպիսի ինչ ոք է. և յարէ զկնի, թէ սոքա ամենեքեան ընտիրք և պատուականք էին ։ Եթէ երդնուլ հասանիցէ, ասէ առ որ շուրջն կան՝ թէ և յաւաջ բազում անգամ երդմնի եղեալ եմ ։

# ԻԸ.

## ՎԱՍՆ ԾԵՐՈՒՍՄՆՈՒԹԵԱՆ

Ծերուսումնութիւն թուի ձիգըն և ջան 'ի վեր քան զհասակն ։ Եւ ծերուս կամ անագանուսումն նա է, որոյ անագանի ընդ ուսումն եկեալ, և վաթսնամենի ուսեալ 'ի բերան տաղս քերդածաց, արտասանէ 'ի խնջոյս, և վերանայ բանին 'ի նմանէ ։ Եւ յորդւոյ խուրմէ հրահանգի 'ի տէգ և յասպար և 'ի վերջապահութիւն բանակի . և ընդ պատանեակս գումարի ջահարշաւ լինել 'ի տօնս դիւցազանց *։

* 'Ի տօնս Սպանդարամետին և այլոց դիոց ոմանց և դիցուհեաց երկրպագուք ջահ 'ի ձեռս բանդագուշեալ և կոկոզեալ ապա-

Եթէ 'ի զոհս Հերակլի կո_
չեսցի , եդեալ զհանդերձն՝
բուռն հարկանէ զարջառոյն
ընդունելն զնա . և երթեալ ընդ
հրահանգս վարժոցացն անցա_
նէ : 'Ի տեսիլս խաղուց դռե_
հաց զերիս և զչորս նուագմն 'ի
գլուխ դեգերեալ ննայ , 'ի մի_
առնուլ զեղանակս երգոյն :

Սաբաղեայ* նուիրեալ զանձն
'ի նորընծայութիւն, գերազան_
ցել նկրտի զայլովք առ . քրմին:
Քրմուհեացն սիղեխ մնանէ ,
և նգախարխար զգրունս տար_
փածուլին արարեալ , և չարա_
գան 'ի հակառակորդ հոմանւոյն

ծառայարարէ ունելով ընդ քաղաքն
ընթանայէն :

* Սղանդարամետական խորհրդ_
դոյն և կրօնից փոխեալ զանձն 'ի
նորընծայութիւն . զի Սաբաղեոս
է Սղանդարամետ, որ այն իսկն է
Դիոնիսոս, Բաքոս :

*Թոպեալ, 'ի դատաստան վարէ զնա :*

*Եթէ զայլոյ ուրուք ձի կալեալ յագարակ գտայցէ, ջանայ զճանապարհայն ընդ կիրթ ձիավարութեան ելանել, և անկեալ վիրաւորէ զգլուխ իւր : Զհանգանակողն ընդ իւր 'ի գինեբրուս՝ առնու տանի 'ի տամլտերեան խաղս * : Եւ զերկայն արձանին խաղս խաղայ **, և ընդ արբանեկին նետընկեց լինի, և ընդ մանկածուլին աշտէնս արձակէ, և խառն ընդ մանկտին դասալքէ 'ի նմանէ՝ իբրև յանհմնաց իմն կարգի գնելով զանձն : 'Ի բաղանիս*

* Խաղք կանանցէին անարժանք, և ալեւոր հասակին անձանցն անվայելչականք :

** Էր արձան կամ կոթող ինչ, յոր զնետսն արձակէին որք 'ի դիպայգութեան կամէին ուսանել :

ըմբշամարտեալ՝ ստէպ ստէպ զզուական սատանանէ, զի քաջակիրթ երևեսցի: Եւ յորժամ կանայք իցեն, 'ի կաքաւմտաբերէ՝ անձամբ անձին դայլայլիկս մրմնջելով:

## ԻԹ.

## ՎԱՍՆ ՎԱՏՈՒԹԵԱՆ

Վատութիւն թուի թէ երկիւղածին ինչ լքումն իցէ սրտի և մտաց : Եւ վատ այն ինչ ոք է, որ 'ի նաւելն՝ զապարաւանդան նաւս հինից առէ լինել. 'ի ծփել ալեացն՝ հարցանէ, եթէ իցէ՞ ոք 'ի նաւին աննուէր դից * . և զաչսն 'ի վեր ամբարձեալ՝ հարցանէ զնաւուղղին, եթէ զկէս ուղւոյն ունիցի՞, և զի՞ արդեւք խորհիցի զօդոյն : Եւ առ ընթերակացն ասէ, թէ յանրջոց ինչ զարհուրեալ եմ. և հանեալ զպարեգօտ իւր՝ տայ ցմանուկն,

* Որ չէին ընծայեալ 'ի խորհուրդս և 'ի կրօնս դից, ամբարիշտ համարէին, և նաւելն ընդ նոսա՝ վտանգաւոր :

և աղաչէ փոքր մի 'ի ցամաք կոյս վարել զինքն :

Եթէ ընդ հետևակամարտս զինուորեալ գտանիցի, իբրև այլք 'ի Թիկունս ուրեք հասանելոյ զէն առնուցուն, նա ձայն առնէ նոցա և աղաչէ, կալ վայր մի նախ տեսանել. Զի գործ է, ասէ, ճանաչել՝ որ կողմ թշնամեացն իցէ : Իսկ զխօշիւն խաղմին առեալ, և տեսեալ զանկեալսն 'ի մարտին, ասէ առ որ մերձն կան, թէ առ ճեպ տապնակին 'ի զէն ընթանալոյ մոռացայ առնուլ զուսերս : Եւ սնդի 'ի խորանն, և անտի դէտ հանէ զմանուկն՝ հայել լրտեսել ո՞ւր արդեւք իցէ թշնամին. և անդէն թաքուցեալ զուսերն 'ի սնարս մահճացն՝ ընդ վայր յածի բազում ժամանակ իբրև 'ի խոյզ և 'ի խնդիր նորին :

Եւ 'ի վրանէ անտի տեսեալ՝ զի 'ի սիրելեացն զոք ածեն վի‿

րաւոր, ընթացեալ առ նա քա-
ջալերէ սրտապնդէ, ուս տայ
ընդ նովաւ մտանէ, առեալ տա-
նի. և սպաս բժշկութեան հա-
րեալ, ջնջէ զարիւնն սպնդաւ,
և նստեալ առ նմա՝ զճանճն 'ի
խոցոյն վանէ. զամենայն ինչ
առնէ, բայց միայն զի ընդ թըշ-
նամին 'ի կռիւ մի՛ մտցէ: Եւ
մինչ դեռ 'ի նշան մարտի զպա-
տերազմականն նուագն փողարն
գոչիցէ, նա նստեալ 'ի խորանի
անդ, Գրող զքեզ տարցի, ասէ,
սև արև. ստէպ անդուլ ազգե-
ցութեամբք չտաս մարդոյ նիրհ
առնուլ:

Եւ յօտարին վիրաց արիւ-
նաթաթաւ ընդ առաջ ելեալ
դարձելոցն 'ի կռուոյն, պատմէ՝
թէ ո՛րպէս 'ի վտանգ անհնարին
տուեալ զանձն՝ զոմն 'ի սիրե-
լեացն ապրեցոյց: Եւ 'ի ներքս
առ. անկեալն վիրաւոր մուծա-
նէ զնոսա, տեսանել զքաղաքա-

ցին իւրեանց և զտոհմային. և միում միում 'ի նոցանէ կա֊ցեալ զուցէ, թէ զկամըդ ինք֊նին 'ի գիրկս իւր բարձեալ ած յանձանձեաց զնա 'ի վրան անդր ։

## Լ.

## ՎԱՍՆ ՍՆԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ

Սնապաշտութիւն թուի թէ լիցի աւելորդ երկեւղ դից : Եւ սնապաշտ է , որոյ լուացեալ յաղբեր զձեռսն և սրսկեալ զանձամբ զջուր սրբութեան , առեալ դափնի * 'ի բերանն՝ այնպէս շրջի զօրն ցերեկ : Եւ զճանապարհայն՝ եթէ անցցէ զնովաւ կատու , չգնայ յառաջ՝ մինչև երթիցէ ոք ընդ նոյն , կամ թէ ինքն ընկենուցու քարինս երիս 'ի վերայ ճանապարհին :

Յորժամ օձ 'ի տանն տեսանիցէ , եթէ պարիսան լիցէ՝ զՍա-

* Զդափնոյ նանրահաւատք կարծիք էին , թէ հալածիցէ զամենայն վտանգ՝ յորոց վերայ գտանիցի :

բաղնոս կարգայ, իսկ եթէ սուրբ սաացեալն՝ անդէն վաղվաղակի 'ի մեհենի կանգնէ ։ Որ 'ի կէսս Ճանապարհաց վէմք կային օծեալք , մատուցեալ հեղու 'ի վերայ նոցա զշիշ իւղոյն , և 'ի դուճս անկեալ երկիր պագանէ և գնայ ։

Եթէ մուկն զպարկ ալերն կրծիցէ , երթեալ զկխուսահմայ հարցանէ , զինչ գործել իցէ . և առեալ պատասխանի , թէ երթ տուր կարկատել մորթեգործին , ոչ անսայ , այլ 'ի բաց հանէ զպարկն և զոհս ընդ այնր մատուցանէ ։ Ստէպ և յաճախ սրբէ զտուն իւր , ասելով թէ Եկատեայ * արկածք 'ի ներքս կան անկեալ ։

* Եկատէ դէմ լուսնին էր , առ որ հանէին զպատճառս վերնոտութեան կամ լուսնոտութեան և զպայլոց ինչ անէպից . և այս էն ար-

Եթէ յերթալն 'ի տուն բուռեսանիցէ , խառղլի և գոչէ , Վէհք Աթենաս . և այնպէս ապա անցեալ գնայ ։ Ոչ 'ի գերեզմանս ելանէ , ոչ յուղարկ մեռելոյ և ոչ առ ծննդական կանայս առնու յանձն գնալ . այլ Պլատոյ է ինձ , ասէ , սուրբ լինել 'ի պղծութենէ ։ 'Ի չորրորդս և յեւթներորդս աւուրց հրաման տայ գլխի եփել 'ի տան, և ելեալ գնէ մրտենիս և սնակ մի կնդրուկ , և մտեալ պսակէ զօրն 'ի բուն զհերմափրոդիտական դրօշեալսն * ։

Կածքն Եկատեան ։ Այս և յաջորդքն ամենայն մնոտի պաշտամունք էին և հարց խոտրանք ըստ իմէք իմէք դիցն կարծեալ տեսութեանց ։

* Դրօշեալք էին՝ որոց գլուխ էր Աֆրոդիտեայ , իսկ այլն ամենայն՝ Հերմեայ ։ Գինին յամենայն

Եւ իբրև երազ տեսանիցէ , գնայ առ երազահանս և իղձս և հաւատդէտս , հարցանել՝ թէ առ ո՛ 'ի դից կամ՛ 'ի դիցուհեաց արժան իցէ յաղօթս կալ : Եւ ձօնեալ զանձն առ որփէա_կան * խորհրդակատարսն՝ եր_թայ ամսոյ յամիս հանդերձ կնաւ . իսկ թէ կինն չպարա_պիցէ , առնու ընդ իւր զդայ_եակն և զմանկունսն :

Եւ եթէ 'ի ծով լոգանալ կամիցի , և հայիցի ոք ընդ նա , խստորս զգլխոյն արկանէ , զի մի՛ ոք չարակնեսցէ 'ի գեղ նո_

ղաշփամունս յաճախեալ էր նուէր հեղեալ դից . իսկ մուրտն յօնի Ա_ֆրոդիտեայ :

* Որփէական խորհուրդքն նոյն իսկ սպանդարամետականքն էն . և քուրմք նոցա խորհրդածուքն՝ մո_լիք ոմանք էին և երից դանգաց գինք :

րա *։ Եւ ելեալ 'ի կիցս փողոցաց՝ լուսնայ զգլուխն, և կոչեցեալ քրմուհին՝ խնդրէ սըրբել զինքն մկնաոխով և սկընդկաւ **։ Մոլի զոք կամ վերնոտ Թէ տեսանիցէ, սոսկացեալ քստմնեալ 'ի ծոցն Թքանէ ։

* Յետին իմաստ Թերի է 'ի բնագրին և աղօտ․ այդպէս մարԹի յնուանալ և ըրանալ։

** Զմկնաոխն և զսկինդուկն զոհեալ ծխէին շուրջ զորԹեցելովք ։

## ԼԱ.

## ՎԱՍՆ ՉԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Չարախօսութիւն գործ է հոգւոյ 'ի բանս չարս: Եւ չարախօս այն է, որ հարցեալ զումեքէ՝ թէ ո՛վ ոք իցէ, հանգոյն տոհմաթիւ ծննդաբանիցն՝ Արգնախ, ասէ, յազգէն նորա ըմկլզըն առից Ճաւելոյ. և ազգահամարն այս է: Հայր նորա յաւաջ Սովխիաս ոմն անուն էր, և 'ի զօրականին եղև Սովխատրատոս, և ապա 'ի ժողովրդականին գրեցաւ: Մայր նորա յազնուաց Թրակացւոցն է, և անուն նազելոյն Ղուշանադուաւ *: Եւ զոցանէ ասի՝ թէ

* Զանուանէ առ 'ի ծաղր ասէ:

քաջազգիք են յաշխարհին իւ-
րեանց . իսկ այրդ այդ , այնպի-
սեացն զաւակ , չար և մորակի
արժանի :

Առ այլ ոմն ասէ . Գիտեմ
գիտեմ զկանայսն՝ զորոց դուդ
առ իս զրուանցես : Նա առ
այլս անցեալ՝ ասէ . Այս կա-
նայք են՝ որ զանցաւորս 'ի Ճա-
նապարհէ յափշտակեալ վա-
րեն , դղքին և առ դուրս զաւ-
թին հպատակեն :

Եւ եթէ այլ ոք ուրեք բամ-
բասիցեն զոք , զկնի կցէ և նա .
Զայրդ զայդ , ասէ , ես քան
զամենեսեան ատեամ . զի և
ժահադէմ ոք է յերեսացն , և
չարեօք անզուգական : Եւ նը-

Ծանէ չարախօսդ , որպէս Թէ ա-
սել Թերևս , ճշմարիտ իմա զասա-
ցեալս զնմանէ իբրև զգուշա բա-
ղիտան :

շան այն է, զի կնոջ խուրում՝ որ բազում տաղանդս եբեր նմա ընդ իւր պաշտատականս, երխ պղինձս տայ 'ի ուռճիկ․ և զմանուկն ծնեալ նմա 'ի նմանէ՝ ցուրտ ջրով հրամայէ լուանալ յաւուրն Պոխդոնի * ։

Եւ յակումբս բազմականի 'ի յառնել ուրուք և գնալ, զնա 'ի ձեռն առնու․ և 'ի նմանէ սկիզբն արարեալ՝ ոչ դադարէ մինչև յամենայն ընտանիս նորա հատուցէ զլուտանս․ և զվախճանեալսն անգամ ընդ վայր հարկանէ ։ Եւ զայս ամենայն՝ համարձակութիւն կոչէ և ռամկապետութիւն և ազատութիւն, և 'ի կեանս աշխարհիս զայն քաղցր քան զամենայն վարկանի ։

* Տօն՝ որ 'ի նոր յՄերայնի հանդիպէր ։

*Այս չարախօսութեան մար֊մայ՝ մոլեկանս և խորթաբա֊րոյս առնէ զմարդիկ ։*

## ԿԱՏԱՐԵՑԱՆ
## ՆԿԱՐԱԳԻՐՔ
## ԹԷՈՓՐԱՍՏԵԱՑ

# ՑԱՆԿ ԳԼԽՈՑ


Յնեոջրասփ առ պո-ղենղեո. 9

Ա. Վասն խորամանգու-թեան. 12

Բ. Վասն սոփաջասպա-սութեան. 15

Գ. Վասն մարդահաճու-թեան. 20

Դ. Վասն ժծարգու-թեան. 22

Ե. Վասն սնափառու-թեան. 24

Դ. Ի Ե Վասն սնափառու-թեան, այլով կեր-պաւ. 27

Զ. Վասն ամբարհաւա-ճութեան. 32

Է. Վասն ամբարտաւա-նութեան. 36

Ը. Վասն գոռոզութեան. 38
Թ. Վասն ծուլութեան. 41
Ժ. Վասն բարկութեան. 43
ԺԱ. Վասն ծաղրութեան. 46
ԺԲ. Վասն ուրախութեան. 48
ԺԳ. Վասն ցոփութեան. 52
ԺԴ. Վասն չարախնդու-թեան. 55
ԺԵ. Վասն անշնորհու-թեան. 58
ԺԶ. Վասն անամօթու-թեան. 61
ԺԷ. Վասն ծօշաքաղու-թեան. 64
ԺԸ. Վասն ագահութեան. 69
ԺԹ. Վասն նենգութեան. 72
Ի. Վասն կասկածոտու-թեան. 76
ԻԱ. Վասն տրտնջոտու-թեան. 79
ԻԲ. Վասն շաղակրատու-թեան. 81
ԻԳ. Վասն շատախօսու-թեան. 84

| | | |
|---|---|---|
| ԻԴ. | Վասն սփայօղութեան | 88 |
| ԻԵ. | Վասն ապշութեան. | 93 |
| ԻԶ. | Վասն անձամութեան. | 96 |
| ԻԷ. | Վասն ընդվայրահո-գութեան. | 99 |
| ԻԸ. | Վասն ծերուածու-թեան. | 101 |
| ԻԹ. | Վասն հափութեան. | 105 |
| Լ. | Վասն անապաշտու-թեան. | 109 |
| ԼԱ. | Վասն չարախօսու-թեան. | 114 |